

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԳԵՍ Ի ՍԱՐԱԿԱՆ

ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՅ ԱԶԳՆ

ԵՒ ԻՒՐ ԱՌ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆՆ ԸՐԱԾ ՕԳՈՒՏԵՐԻՆ

(Տես Հայ. լթ. Պր. Ա. Բ. Գ. էջ 3, 97, 199).

ԳԼՈՒԽ Է

Մարզպանուրեան, կիրապադատուրեան և ոստիկանուրեան ժամանակը : - Հայոց այս ժամանակի կացորդինեն և առ օտար պետուրին մատոցած մեծամեծ ծառայուրինքը : - Հայկական բազաւորը թիգանդինի, կամ հայ բազաւորեան ժամանակի : - Թագաւորութիւն բացրաւունեաց : - Քաղաքական վիճուրական և վարչական վիճակի : - Այշտակը բարրարուաց : - Անքմուիք : - Գաղցականուրինք Հայոց ՚ի տար աշխարհն :

Ասաննեանց բռնաւորական լուծն , որ առ կենդանութեամբ Արշակունի թագաւորաց ոմանց արդէն իսկ ծանրացած էր Պարսից բաժնին վրայ , այնուհետև , այս ինքն է , յետ անկման թագաւորական գահուն , սկսաւ կապարի պէս ճնշել և երկաթի ուռան պէս հարուածել նաև զՀայս Յունաց բաժնին , թեռուոսի թ ակարութեան և անոր յաջորդաց անհոգութեան պատճառաւ :

Բաւական չէին նիւթական և քաղաքային աւելմունքն և մեծամեծ յե-

ղափոխութիւնքն , զորս կրեց Հայաստան իւր ծոցը յամին 429 , և որոնց վրայ տակաւին կ'ողբան հոգիք հայրենեաց : Հապուհ և Յաղկերտ Հայաստանեաց կրօնիքն ևս կ'ուզեն իսպառ բնաշինջ լուել : կը գիմեն Հայք աշխարհորէն ՚ի պատերազմ . բայց , աւազ , ուխտապահից սակաւաձեռն զօրութեամբք ե եթ , և զլրկին բազմութիւն ուրացեալ որդւոց իւրոց ևս իրեն գէմ ոխերիմ թշնամի կը տեսնէ այս միջոցիս Հայաստան : Զայդ ընդ քաջին վարդանայ , 1036 արի նահատակներ ևս կ'ինկնան ծշմարիս և նուիրական զոհք փրկութեան կրօնիցս և Հայրենեաց : Պատուական նախարարաց , եպիսկոպոսաց , ժառանգաւորաց և յամենայն գասակարգութենէ հայ ժողովրդեան կորրատեան թիւը շատ մեծ է : Սակայն մենք Ե դարու վերջերն և ՚ի սկիզբն վեցերորդին Հայաստանի մէջ եղած յեղափոխութեանց պատմութիւնը Եղիչի և Ղազարայ Փարավեցայ կը թողունք : Եւ մենք ուղղակի մեր նիւթին

վերաբերեալ իրաց վրայ ուշադրութիւննիս կ'ուղենք գարձնել, այսինքն է, հայ ազգին ծառայութեանց վրայ:

Խորագին հոյեացք մը ձգերվ մեր տոհմային պամագրութեանը վրայ, կը տեսնենք՝ յայտնապէս, որ չկայ դրացի ազգ մը՝ առ որ այնչափ համակրութիւն ունեցած ըլլայ, չայոց նախարարաց կամ՝ ազնուականաց բարձրագոյն գալրն, քան զոր ունեցաւ առ Պարսիկս անդատին ՚ի Հեթանոսութենէ մինչև ցջ և է դար քրիստոնէութեան: Ուստի ընականապէս կը հետեւէր, որ Պարսից ազգն ամենէն աւելի այնպիսի համակրութեան և սերտ յարաբերութեանց արգասիքն վայելած էր և գեռ պիտի վայելէր:

Արշակայ Բ և Պապայ ժամանակէն ՚ի վեր, որոնց խեռութեանը պատճառաւ քան Սասաննեանց բռնութեամբքը եկան բոլոր այն աղէտքը Հայաստանի վրայ, վայելեց իրօք Պարսկաստան՝ Հայոց ընտիր հեծելոց և աղեղնաւորաց հետ՝ նաև բազմաթիւ նախարարաց և զօրավարաց օգնութիւնքը և մեծամեծ ծառայութիւնքը մինչև ցվերջ մարզպանութեան: Այս ամենասասարդ կէտ մ'է ՚ի պատմութեան:

Մերուժանն Ալբրունի, վահան Մամիկոննեան¹, Ներսես կամնարական և այլ բազմաթիւ նախարարք ընդ նմա, որոնք թէպէտ և իրենց հայրենեաց համար սխտադրութ մատնիքը գտնուեցան, սակայն Սասաննեան թագաւորաց համար պանչեի զօրավարներ եղան և մեծամեծ ծառայութիւններ մատուցին: Ուրացեալ Հայոց ծառայութիւններ քը, որչափ որ ըստ ինքեան մեծ են և Պարսից պատճութեան մէջ իրքէ յիշասակաց արժանի զործ՝ նշանաւոր տեղ բռնած, սակայն անոնցմէ շատ աւելի մեծ եղան Մարզպանութեան ժամանակի Հայոց մատուցած ծառայութիւնքն: Հայաստան թէպէտ և այս ժամանակիս մէջ իւր թագաւորութեան աթոռէն ինված՝ և իւրք Սասաննեանց

¹ Աչ է այս եղբօրդին Վարդանայ կամ մասսւէն Վահան,

հարկահանաց և մարզպանաց լծոյն տակ կը տառապէր, բայց զինուորական ոգին և զօրութիւնն, կրնանք ըսել, թէ բնաւ շիշած չէր, այլ մանաւանդ թէ Արշակունեաց վերջին թագաւորաց զօրութիւնը կը գերազանցէր իսկ և կրնար 300,000էն աւելի զօրք հանել՝ ի պատերազմ:

Այս միջոցիս Հայաստան բաց յանքաւ բերոց և ոսկւոյ բնիկ երկրին, զոր ամ ըստ ամէ կը զրկէր Պարսից, կը հանէր նաև բազմաթիւ զօրաց բարեկարդ բանակներ: Ուստի ինչպէս Դ գարուն հարաւէն յլսորիս և ՚ի Միջագետու ՚ի վերջ կցս և դարուն Հայոց օգնականութեամբ կրցան Պարսիկ տարածել իրենց տէրութիւնն հիւսիսէն ալ վրաց, Ազւանից և Վրկանից վրայ: Բաւական է առ այս կարգալ Փարպեցւոյ, Եղիշէի, Թօվմ: Ալծրունոյ Մ: Կազմակատուացւոյ և այլոց պատմագրութիւնքը:

Խորէն Խորիսուսւնի, Արսէն Ընծայլին, Ներսէն Քաջրերունի, Վահան Արծրունի, Միհրշապուհ Մարդգարետ, Արտակ Մոկացի, Փափագ Առաւելին, Թաթուլ Վանանդեցի, Տաճատ Գնդունի, Համազասպեան, Արշաւիր Արշարունի և այլոց քաջարի նահատակաց պարք՝ իրենց գէնքերը Պարսկաստանի վրայ դարձնենքն և մարտիրոսական պասկն առնելին յառաջ՝ ՚ի ձեռաց թագաւորաց թագաւորին Երկնից, Հայոց Սպարապետին Վարդանայ հետ նախ հիւսիսային, արեւելիան և հարաւային ազգաց գէմ ցուցին իրենց զինուորական հանճարոյն զօրութիւնն, և հայկարաք գործած մեծամեծ յաղթութեամբքն՝ պսակեցան ՚ի թագաւորաց Պարսից և պսակեցին զնոսա յաղթող և արքայից արքայ սահմանակից աշխարհաց վրայ:

Ցահմային պատմագիրք² մեր, Վարդանայ համար՝ միայն կը վկայեն, թէ 42 մեծամեծ պատերազմաց մէջ յաղթող հանդիսացաւ: Եւ սոուգիւ ապերախտ թագաւորն ինքնին Յաղթերս,

² Ղ. Փարպեցի, Խ. էջ 215, և ԽՄ. էջ 233. և Ազգէ:

ճանչցեր էր անոր ծառայութեանց և հաւատարմութեան յարզը, երբ այս դրուատիքը տուաւ բոլոր արգունեաց և հակառակորդին անգամ վասակոյ ներկայութեամբ՝ վարդանայ վրայ խօսելով, թէ . ա Զայնափիսի քաջ և պիտանի և վասատակաւորն մեր՝ զլարդան ... զոր կայսրն և թագաւոր Հոնաց բանութեամբ, յինէն հանել կամիկն, ամենայն Արեաց ուժովս կոռուէի, և շտայի հանջել մինչև այսրէն յիս հանէի . : Այս գովեստը արդարե վարդանայ մասսին միայն տրուեցաւ, բայց բոլոր անոր հետ նահատակող գորավարաց¹ ևս կը պատկանի: Վասն զի անոնց մէջ ումանք, կրնանք ըսել մեծ բանասիրի մը հետ, թէ ազնուատոհմութեամբ և այլք քաջութեամբ և բազմաթիւ ծառայութըք՝ վարդանէն վար չէին մնար:

Սակայն Հայաստանի ամեն նախարարական ցեղերէն աւելի՝ Սիւնեաց ցեղը՝ ի սկզբանէ ՚ի վեր՝ եղան եռանդուն և հաւատարիմ ձեռնտոք Սասանեանց և կուսակիցք նոցա: Յետ Անդովկայ Սիւնեաց նահապետին, որ էր Աներ Արշակոյ թ, Վաղինակ Ա անցաւ ՚ի բարձ հրամանաւ Շապէոյ: Բարիկի իւր Դարա որդւով Նոյնպէս Պարսից կողմը հակեալ էր, որոն իշխանութեանը մէջ յաջրդեցին ապա Վաղինակ թ և անոր եղրօրորդին՝ վասակ:

Այս փառասիրութեան ախտով վարակեալ ոգին, որ ընդ կատիլինայի և ընդ Մերուժանայ արժանի է դասիլ, չի վախցաւ անոնց թշուաւ կատարածէն՝ ըստ ամենայնի անոնց գործոցը հետ զուղընթանալով: Այնչափ մեծ եղան

1 Ղ. Փարաեցոյ բրոց Խի գլուուն մէջ. Պարսից Սիւնեսէրսէ հաշարապէտ Վարդանայ քաջ Զաքործութիւնը լիշելով ՚ի Սիւնեփառաւ և այլուր, կը յաւելու: « Դոս բազու քաջաւու կ Արքէ յիւնէն, ընդ որս և նորու կորս եղեաւ էր»: Եւ Եղիշէ Զ Եղանակին մէջ, էջ 202, Պարսից Սպառապետն այսոց վերցիշեալ զօրավարներն և անոնց գործերն է ակնարել ցեղելով իշեններուն: « Իուք ինքնին դիտէք զաջանաւին աշխարհն Հայոց և առան առանախայինն»: և թէ, « իբրեւ ուսեալ տեղեկացաւ զառ առա խօսաւակիւն»: Խոկ Եղիշէ իւ Եղանակին մէջ, էջ 178, սպառապետն Վարդան դեռ աւելի

Մարդպանիս, Գաղիշոյի, Գարջոյի և Գդուիհոնի հետ Սասանեանց մատուցած ծառայութիւնքը, որչափ մեծ եղան Հայոց աշխարհի աղէպն և աւերմնին:

Մամիկոնեանն Վարդան յամին 451 աշխարհական ճակատամարտիւր անշուշտ Մամիկոննից Տէրուրեան, Հայոց սպարապետուրեան Յունաց լրտրատեատուրեան և Հայ բազմարի տեղակալուրեան պատուանշանաց և իշխանութեան հետ կը վերականգնէր Հայաստանի թագաւորական նոր հարատութիւն մ'ալ Սասանական թագաւորութեան համայնաջինն կործանմանը վրայ, եթէ ուխտագրուժ տէրն Սիւնեաց և Մարդպանն Պարսից ու բացողն Վասակ, չի փութար և Հայաստանի աւերակացը վրայ չի տարածեր անոր ապերախտ և ուխտանենդ որդւոց յաղթական դրօշը: Վասն զի ըստ վկայութեան քաջահմուտ մատենագրի² մը, « Գառանց և գայլոց այսինքն է, ուխտապահ և ուրացեալ Հայոց զօրաց թիւն, որ կը գտնուէին Աւարայրի դաշտին մէջ ընդ սպարապետութեամբ քաջին Վարդանայ և վատին Վասակայ՝ 120,000ի կը հասնէին: Սակայն ասոնք հնոյն Հայաստանի 20 աշխարհաց կամ նահանգաց՝ մի մասին միայն զօրաբաժին կը համարուին: Ուստի այսպիսի ծանր հարկի ժամանակ, մանաւանդուր կինաց և մահու իննդրէն զատ՝ կրօնական ոգին և բորբաքեր էր արդէն զրոյոր Հայաստանեայս, սպարապետն Վարդան փոխանակ 66,000 զօրաց, կը ընար ունենալ մինչև 300,000 զօրաց

յայանի կը ցուցընէ հայ զօրավարաց և վիսուարաց մէծամեծ ծառայութիւններն ըսելով. « Ի բազուց առաերազմանն մաեսլ է իմ և ձեր ընդէմուն է ուրեք, զի քաջապես յաղթեցաք թշնամաց և է ուրեք՝ զի քաջապես յաղթեցաք յաղթեցին, և բազում այն է որ յաղթող գաեալ ենք և ոչ յաղթեալք: Եւ մէք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարտուն աւելիք մէքս և ազիս բազում և բազում այն քաջութիւն իցէ, քան որոյ տաեալ էցէ և պարզա մեծամեծն»:

2 Հ. Ղևոնդ Ալիշան. Յուշիկ Հայր. հա. Ա. էջ 244, 245:

բանակ մը, իսկ արդ եթէ 66,000 արփ նահատակք, որոնց բուն նպատակն էր մարտիրոսաննալ քան յաղթանակել, վերջին ճգնաժամի մէջ հասուցին ըզ-Պարսկային բանակը, որ յ300,000 զօրաց կը բազիանար, և արդէն իսկ սկրսած էին յաղթել Վարդանանք, եթէ ուրացողքն Հայոց՝ օդնութեան չի հասնէին: Այս ինչպիսի ահաւոր կոտորած և կործանումն՝ չի պիտի բերէին Սասանանց տէրութեան նոյնաթիւ բայց Հայոց քաջաց բանակովի, որոնց միոյն գէմ երեք հոգի հաշուած էր Պարսից սպարապետն, ըստ վկայութեան Եղիշէի և Ղաղարայ. և իրօք նոյնպէս ալ ինկած գտնուեցան այն պատերազմին մէջ:

Այսպէս ուրեմն Սիւնեաց իշխանին Պարսից ըրած բարիքն յայսմ կայացած են, որ իւր ծածկագէտ խորամանկոթեամբ ոչ միայն զլինատոիս և զկայարն Հոռոմոց՝ հանդերձ անոնց բաժնին Հայաստանով, այլ նոյն իսկ բոլոր Հայոց հիւսիսային սահմանակից աղջերն և արևելեանն Հայաստանի հայ նախարարաց² մեծագոյն մասը, զոմանա խոստամբք խոտորեցոյց՝ ի վարդանանց, և զայլս սպառնալեօք չէզօք բռնեց այն համաշխարհական պատերազմին ժամանակ:

Սակայն կը թողունք ուրացելոց Հայոց առ Պարսիկս ըրած օգուտաներն, որոնց վատ անուանքը յօտար լսելիս անգամ գէլ կը հնչեն, թող թէ՛ի սիրտս հայրենապիրաց. և մէջ բերենք ուխտապահ Հայոց ասկէ ետքը գործած օդուտաները:

Եղիշէի և Ղաղարայ պատմութիւնքը վիշտ վիշտին, որ Վարդանանց պատերազմին վերջը, թէպէս և Հայք բարացապէս յաղթել ելան և առժամանա-

կեսյ խաղաղութեան դաշինքը հաստատեցան ՚ի միջի, սակայն Պարսից տէրութիւնն եթէ կրօնական ըլլոյ և եթէ քաղաքական տեսութեամբ, յետ դրաւելոյ հայ ժողովրդեան և նախարարաց հարստաթիւնքն և կալուածները ՚ի գանձն արթունի, կը վարէ զանոնք Ասորեստանի և Մարաստանի ամայի անապատաց մէջ, « ի գործ աղքունի և ՚ի մշակութիւն երկրին », վասն զի Հայոց համբաւն արդէն իսկ հոչակուած էր յայսմ մասին: Կերթան Հայք կապեալ ոտիւք և կաշկանդեալ ձեռօք այն աւագուտ և արեակէզ աշխարհաց մէջ: Սակայն քիչ ատենէն շահուզ, Մեշովս, Քաշկար և այլ տեղիք յանապատին խուժաստանի և Ասորեստանի, հանգոյն թերայիտայ և այլոց անապատացն Եգիպտոսի, ոչ միայն գունդագունդ բազմութեամբ քրիստոնէից կ'ածին և կը բարգաւաճին, զորս յամենայն ազգաց³ և մողովրդոց կը թողունք անդ Հայք, և իրենց վարուքն և վարդապետութեամբքը կը հաստատին քրիստոնէական հաւատոց մէջ, այլ նոյն իսկ վաճառականական տուրեառութեամբ և մշակութեամբ ծաղկեցան այն ամսութ անապատներն յընթացս 45 ամաց, ուր որ երասմական հովիտը բնակող ժողովրդեան ութերն ընթացան: Հայք ուրեմն իրենց աքսորանց ատենն իսկ այն անբնակի անապատները չենքերով յընհորներով կամ արուեստական ովասիսներով բազմաբնակ ըրին, և երթևեկիսաթեան ճանապարհորդ միացուցին զանոնք Շօշի, Եկրաստանայ և ուրիշ քաղաքաց հետ, և այն անապատներէն հանած ուկեհանքներով և պատուական քարերով Պարսից տէրութեան գանձը ճոխացուցին:

2 Աղուանք, Հնկը, Մաւրեայք, Վերք և բոլոր միւս գանձակից աղջք, պատրաստ էին միշտ միանլու Հայոց հնաւ ընդգէմ Պարսից, որոնք բռնի գաղանակիցք եղած էին քան թէ կամաս Եւ իրօք Եւս բարձւմ հրաւիրանաց՝ անդէն և անդ յետ ճակասամարտին Վարդանանց միացան ընդ վահանայ Ամատունեց, որ աղջական էր անսնց, և Վահանայ մարզպանի:

3 Եղիշէ. Ութ. Ել. էջ 324.

Սակայն հայ աղջի այն գերեվարեալ ժողովրդեան և նախարարաց հետ դառն նանք մենք ալ 'ի Հայաստան և աչք մը տանք անոր քաղաքական կացութեանը վրայ:

Մանուկն Վահան, որ Վարդանանց աղետից փաքր 'ի շատէ ականատես եւ զած էր և Պարսից և ուրացեալ Հայոց դաւաճանութեանցն իրագէտ, կրցաւ իրբե նոր ոմն Պարսից իւր նրբահայեաց քաղաքագիտութեամբն և զինուորական քաջագործութեքը Հայոց մարզպանական ինքնավարութեան հետ, նաև Մամիկոնեանց տունը փառաւորել Ասոր առաջնորդութեամբ թէպէտ և մոռցաւ Հայաստան իւր քաղաքապիսի աղէտքն և միխթարուեցաւ, թէպէտ և Վարդանանց քաջարի ձեռնարկութիւն քը հասան իրենց նպատակին, բայց Հայաստան բոլորովին զեռ չի կարողացաւ կեդրոնանալ մէկ թագաւորական գաւազանի ներքեւ և իւր կորսրնցուցած երկիրները վերստին գրաւել՝ մինչ ցլ դար:

Յեօթներորդ գարուն՝ մահմետականութեան փոթորկակից արշաւանքն յԱրաբիոյ ունեցաւ իւր ծագումն և տիրեց բոլոր արևելքի: Զօրոաստրի կրօնին և սասանական հուը կարծուածէն աւելի երագ շինան այն բուռն զօրութեան առջև: Բայց Քրիստոնէութիւնը միշտ մը նաց անբաժան յորդիս Հայկազանց, վերստին փայլելու անոնց բազմաթիւ բայց փորդիկ թագաւորութեանց՝ թագին վրայ, որոնց մէջ առաջին և վերջինն եղաւ Բազրաւառունեաց թագաւորութիւնն:

Ի Թագաւորութիւն Վանանգայ, Բազար, Կապանի, Սիւնեաց, Փափսոսյ, Ալուանից, Ջորդեաց, Անձնացեաց, Դարբանդայ, և այլոց աեղեաց:

Տ Ելիկ Ընկեր՝ իւր նոր հաստարակութեանը մէջ, որուն վերնագիրն է Nouvelle géographie universelle, կ'ըսէ, թէ Հայոց ամենափառաւոր թագաւորութիւնն Բագրատունեաց ժամանակն էր: Ենթանակին այս կարծիքն, որպէս որ ըսդահուր առնելու չափազանց և անձից կ'երեք, սակայն մասնաւոր եւստութեամբը նկատելով կրնայ սասոյդ ըլլալ, որոնց վրա մեզ հետ կ'ու զենք գարձենենան. վերծանողաց ուշագրութիւն:

Այս պատուական նախարարութեան տոհմը, որ 14 գար սուաջ Հայկաղունի թագաւորաց զօրավարներ և ծառայութիւններ մատուցանելէն զատ, Արշակունեաց հարստութեան գողցեն ամենայն թագաւորաց թագաղին ևս եղած էր միշտ, յէ գարուն, Աշոտոյ Անեսորութիւններ բարձրացաւ յանկախ թագաւորութիւններ: Այս շրջանիս մէջ Հայք իրենց աննման Աշոտներու, Միմատներու և Գագիկներու իմաստուն վարչութեամբ բր կը համնին իրենց պայծառութեան վերջին կէտն և կը նորոգեն Վաղարշակայ, Արտաշեմի և Տիգրանայ օրերն, և կրնանք ըսել գաղղիացի նոր մատենացրի մը հետ, թէ գերազանցեցին իսկ իւլիք:

Այս շրջանիս մէջ Հայաստանի երեսը կը ծածկեն անթիւ քաղաքներ և աւաններ: Աշոտ շինողի քաղցր բնաւորութիւնն և խոր քայլաքատեսութիւնը՝ կը ձգեն 'ի Հայոց բնուրատր գաղթական: Վիրք, Աղուանք, Հոնք և բոլոր հինաւուրցն Հայաստանի սահմանակից և հարկատու ազգերը՝ դարձեալ կը միանան անոր հետ, և Բագրատունեաց իշխանութիւններ կը տարածուի անդր քան զեղկատու լեռներն և զլլուանն:

Ամեն կողմ նորանոր կամուրջներ և ճամբաններ կը ձգուին: Բատ վկայութեան դազարին՝ միայն հիւսիսային կողմերը 300 կամուրջ յօրինած էին Հայք՝ վաճառականութիւնն, մշակութիւնն, անդէորդութիւնն և այլ ամենայն արուեստը հաւասարապէս բարգաւաճ կ'երեին: Դուին՝ Բաղէջ, կարս, թրոնավէժ, Արծն՝ ընդ Անույ են բազմա-

3 Աշոտը Բագրատունեաց ժամանակ կամած պիտի ըլլան, թէպէտ և հեղինակն իրեւ աւանդութիւնն մէջ կը բերէ առանց օրոշման ժամանակի:

4 Հատ վկայութեան Պրոկոպիոսի և Թովի Արծրուանց թ. 4. « Էր շահասամ մարգարիտա: տուրեառութեամբ վաճառականաց նոր: » ուր կը ժողուակին Արցա, Պարսից, Հոռովայշեցոց և Հնկաց վաճառք:

5 Թով, Արծրուանի. թ. 6.

6 Աստիվերացի:

7 Ղազար. Թղթ. 210.

8 Լաստիվերացի իւր որոց ժ. 4 ժի: Քլուի-

մարդ և ամենափարթամ շահասոտանքն չայց ի ներքս աշխարհին . իսկ արտափիններն էին թաւրիզ, թէհրան, Սպահան, Աղքասանդրիս, Գանձրէ, Փայտակարան, Մելիտինէ և Տրապիզոն: Սակայն ամենէն աւելի բիւզանտիննն էր կեղրոն վաճառականաց չայց, որը կը կապէին զայն արևելեան, հիւսիսային ազգաց հետ, վասն զի այն ազգաց անմիջական վերաբերութիւններն երկիւզալի և յաճախ թշչնամական էին ընդ բիւզանդական պետութեան: Այսպէս ուրեմն արևելեան գորդերուն, կերպասուց և այլ վաճառուց հարսաութիւնն, որոնցմով զեղծաւ նորս այս Բարեկոն՝ մաս մ'ալ Հայ ազգին դործունէութեան արդասիք էին: Հայ հանճարն որ կամ ձախողելով բաղդին և կամ քաղաքական տեսաւթեամիք առ ժամն խնարդ հեցաւ Արքաբացւոց զօրութեանն առջն, վերստին կը բարձրանայ այժմ յաղթական և 'ի մեծագոյն փառս: Եւ անոնց թագաւորին Զափիթ պսակին հետ, կ'ընդունի նաև զպսակն ինքնակալին Յունաց՝ Բարսղի Մակեդոնացւոց:

Հայ ազգն՝ Արքաբացւոց խմդժութիւնը կը կրած ժամանակ, նոյնպէս անոնց արուեստութենէն ևս զիտցաւ օգուտներ քաղցլ: Բաց յաստեղաբաշխական և բժշկական գիտութեանց, որոնց ստուգութեանը կը վկայեն նաև այն ժամանակէն մնացած ձեռադիրն, ուսան նաև զարաքական ճարտարապետութեան ոճն, և իրենց սեպէհական ոճոյն հետ խառնելով՝ աննման գեղեց-

ներուն մէջ այսօտեւ կ'ըսէ: « Ծով և շամած երկներ և առատահայր կրէլ 'ի սմա զըրութիւն իւր »....

1 Յօւստինոս ի զշայաստանն ամսոյացինելու և իր տէրութիւնը զօրացնելու վաճանաւու, Մելիտինէն փոխադրեց 'ի Վ. Պալսէն 'ի Թորոկիա շնայս: Հսոս վկայութեան Ալեքսոս (Պատմ. Հերակլ. Կայո., Եր., 83 և 89), Մօրիկ հայկազն կայսրը Զէ գարուն վերջը Հայ գալթական ներքերս 'ի Թրակիա, և անոնցմէ գունդեր կազմուց, կրցաւ Աւարացւ գէմ գնել Թանութիք վրայ առատած պատերազմներով: Խոյնը ըրաւ կոստանդին Կապրոնինու Ըստ գարուն, կ'ըսէ Ներէց, (Արշ. Արքար. 'ի Հայոս, Եր.-162):

կութեամի ոչ միայն եկեղեցիներ, մենաստաններ, հիւանդանոցներ և գերեզմաններ յօրինեցին, որոնք մնան տակաւին ընդ այնքան յեղափոխութիւնս ժամանակաց: Ա. Ա. Նոյն իսկ կարսայ, Պայեղիտի, կրոխումի, Բարերդի, Երդընկայի և Անւոյ բերդերն, որոնք Ց գարուց միջոցին եղան հիմն հաստատութեան նաև բիւզանդական կայսրութեան յաճարութեանը յերեսաց կործանման ազգացն հարաւայնոց և հիւսիսայնոց: Համեղուելու համար այսմ, բաւական է աչք մը տալ Ստորին տէրութեան պատմութեանը վրայ: Հօն կը տեսնենք թէ արևելեան բերդաբազմաներն անդադար յարձակմունք կրելով յԱրքաբացւոց և 'ի Պարսից՝ ստէպ կ'առնելոին կ'աւրշտրկուին նախ քան զհաստատութիւն թագաւորութեան բադրատունեաց և քաղաքաց նոցա: Իսկ յետ այնորիկ ան մատչելի կը մնան 'ի բոլվանդակ ընթացը այնը թագաւորութեան: Հայ ազգին գիւցազանց՝ երկամբն և արիւնով՝ կը յաջողին Հոռոմք գնել և վայելել զջօթամեայ խաղաղութիւնն յայսմ բաժնի: մինչեռ հարաւային կողմի նահանգներն աւարառութեանց, աւերմանց և սրոյ Արքաբացւոց և Սելծուկեանց ենթարկուած կը տեսնուին յէ դարէն և այսր:

Բիւզանդիինի և Ստորին պետութեան ճարտարապետաց, նկարչաց և քանդակործաց մեծագոյն մասը կազմունենքն Հայք են: Ոլլմահական յիշատակաց արժանի են անուաննք Մանուկի և Պորփիրութէնի, որուն համար կ'ըսէ

Վասիլ. Ըստ վկայութեան Ալովկայ (Եր., 162), գոյ գարուն ամբար Հայեր փոխագրեց 'ի Թրակիա՝ Երկիրը մշակելու և միանգամբյն կայսրութեան վրայ յարձելով Բուլղարաց, Ռուսաց և Մանուկաց հստ պատերազմելու համար: Եւ իր ըօր Մօրիկ և Վասիլ բերած հոյ գալթականներն տարածութիւն Խրվածի, Թեսաղոնիկէի և Մակեդոնից մէջ, այնչափ յառաջադիմեցն իրենց գործունէութեամբը, մինչ անոնց ազդեցութիւն երեցաւ այն ազդաց քաղաքական գործոց մէջ: Եւ ըստ Ս. Ասովկայ, Մամուկէ հայ իշխանը Բուլղարիներուն վրայ թագաւորելով մէտապէս պարգաւառեցուց պահունք:

թէոփանեսի շարունակողն, թէ իւր ժամանակակից նկարչաց մէջ առաջին էր, Եղիայի և Անանուն կրօնաւորին և այլոց հայազգի ճարտարապետաց՝ ընդ աշխարհածանօթին ջրդատայ, ինչպէս տակաւին կը մնան պքանչելարուեստ արարուածքն Աղթամարայ՝ ընդ Ս. Սովիայ, 'ի զարմանս ապառնի ազդաց. (Ասողիկ գ. 27: Թովմ. Արժ. ե. 8):

Բաց աստի, հայ ազգն ուրիշ նշանաւոր կէտով մ' ալ այնպիսի ծառայութիւնները բիւզանդական կայսրութեան, զորս չէին կրցած մատուցանել միւս սահմանակից ազգերն ։ Հայոստան և դարէն սկսեալ թագաւորներ և զօրապետներ ալ ընծայեց բիւզանդական կայսրութեան. Ստուգիւ, յլնթացս երկու և կէս դարուց հայազգի թագաւորք և զինուորական հանճարներով կը կառավարին Հոռոմք. որոնց յաջորդութիւնն եթէ ոչ միշտ ժաւանելական՝ այլ անշուշտ հնայկական կրնանք անուանել: Յետ Յուսինիանոսի՝ բիւզանդական կայսրութեան քաղաքական և կինուորական փառաւորութիւնն այս հայազգի թագաւորաց ատենն եղաւ, կ'ըսէ պատմութիւնը, զորս կ'ուզենք այժմ մէջ բերել: Մօրիկ կամ Մաւրիկէ իշխանն, որ իւր բարեմասնութեամբք այնքան ծառայութիւններ մատոյց բիւզանդիոնի, մինչև կայսրն Տիբերիոս կատանդին ամուսնացուց զինքը իւր զոտեր հետ և կայսրութիւնը իրեն յանձնեց, (582-602). Էր ազգաւ հայ և յօշական գեղէն, Ասոր թէ քաղաքական և թէ զինուորական տաղանդին մեծամեծ գովասանիներ կու տանջնար և կեդրենոս պատմիք: Մժէծ գնունի թագաւորեց յամին 667-668: Ասոր յաջորդեց շուտով Փիլիպպիկ հայիշխանը, բայց երկու տարի միայն կառավարեց: Արաւաւազգ, որ այնքան ծառայու-

թիւններ մատոյց Յունաց, ոչ միայն կոմի և կիւրապաղատի տիտղոսաց, այլ նոյն իսկ Լևոնի դստեր փեսայութեան և բիւզանդական գահուն վրայ բազմելու արժանաւոր եղաւ, Երկու տարիէն վերջը թագաւորեց կոստանդին կոպոնիմոսն նոյնպէս ազգաւ հայ: Լևոն Ե հայազն էր 'ի ցեղէն Ալեքսանդրունեաց, և թագաւորեց յամին 843-820: Վասիլ Ա. Արշակունինախի Հայոց Արշակունեաց և անոնց քաջութեանը սերունդ, որ թագաւորեց յամին 867-868. Իւր մեծագործութեամբքը թէ քաղաքական և թէ զինուորական ասպարիզի մէջ հոչակուեցաւ: Վասիլին յաջորդեցին Լիոն Զ իմաստաւէր կոչուած՝ հայազն, և անոր որդին Պորփիրութէն, որուն համբաւը քաղաքակրթութեան պատմութեան մէջ մեծագոյն տեղ բռնած է, և կրնանք ըսել թէ Ստորին պետութեան ամենէն մեծ և իմաստուն կայսրն եղաւ: Մի և նոյն ժամանակ, այսինքն 914-959, հայազգի իշխանն Ռոմանոս իւր քաջութեանն և մեծ ծառայութեանց համար, արժանացաւ Պորփիրութէն կայսեր զստեր Հեղինէի փեսայութեան, և ապակայսրութեան վարչութեանն, զոր 25 տարւոյց շափ կառավարեց: Զէ և չէ կարեի մոռնալ նաև զանուանս Ռոմանոսի թ, որ թագաւորեց յամին 950-963, և Յովհաննու Զմէկայ, որ յերապօլսեցի աննշան հայ ազնուական ցեղէ մը՝ իւր տաղանդին բարձրացաւ մինչև 'ի գահն Բիւզանդիոնի օծուելով յամին 969: Վասիլի Բ անունն ևս անմահ է ոչ միայն 'ի բիւզանդական պատմութեան՝ այլ և 'ի մեծագոյն յեղափոխութեան Ռուսաց. Վասն զի այս կայորը պատճառ եղաւ Վլատիմիրայ Ա մեծ զքսին Ռուսաց՝ գառնալու 'ի քրիստոնէութիւն, յամին 988, ամուսնացընելով անոր հետ-

1 Խօսկերին Աղթամար քաղաքին վայ է, որուն շինութեան սկիզբը. ըստ վայութեան թօնմարի Արծրուանոց արգէն իսկ տաւեր էին Դաւիթ (Սահառունի, Խաչամար Աշոտունի և Բարդումիրան) այն որ գերի բռնեց զիշերկանոս. բայց վերջէն մեծ արքայն Գրգիր Ալեքսոնի 'ի կա-

տար հասցուց զայն և բոլոր աշխարհի հիմնակի ըրաւ. Այս մեծագործութեան վեայ Ճիշճառափարը ունենալու համար, պէտք է կարգաւ Թովմ. Արծրուանոց պատմութեան Գ. Դարութիւնը, էլ 329-333, ապագը. Կ. Պ. Պուստ 1853:

զդուստր եղրօր իւրոյ՝ զԱննա : Ոչ ինչ ընդհատ նշանաւոր է նաև կոստանդին (եղբայր Վասիլ Բ), որ ծագ տարւոյ չափ դարձուցին 'ի միասին բիւզանդական կայսրութեան բաղդին անիւը :

Այսպէս ուրեմն տասնեւորոս հայ իշխաններ մի զմիոյ կնի բազմելով բիւզանդինի գանցից վրայ՝ ՀՀ տարի կառավարեցին Յունաց ազգէն զատնաև ուրիշ բազմաթիւ ժողովուրդներ : Ո՞րքան չնորհապարտ պէտք է որ ըլլայ Յունաց ազգով Հայաստանի, որ բիւզանդինի խառնաշփոթ կայսրութեան ժամանակը տուաւ այնքան և այնպիսի հայեր, որոնք ոչ միայն յոտին բռնցին զայն, այլ անոր փառքն և մեծութիւնը պանծալի ընծայեցին ազգաց և դարուց :

Իսկ զինուորական և քաղաքական ասպարիզի մէջ մի և նոյն տէրութեան ծառայութիւններ մատուցանող հայ իշխաններու և զօրավարաց թիւը շատ մեծ է . բայց մենք զրմանն եեթ կը յիշենք հօս :

Յուստինիանոսի մեծի ժամանակ (527-565) հայազգի Տաճատ նախարարը կուսակալ կարգեցաւ Յունաց՝ Պարսից սահմանաց վրայ եղած աշխարհաց, և կայսեր քրոջ հետ ամսւանացաւ : Բայտ վկայութեան Պրոկոպիոսի (Բ. 3), բիւզանդինի արքունի հանքաց նախարարն եղաւ Շմաւոն հայկազն իշխանը : Մի և նոյն ժամանակ Ալեքսանդրից կուսակալ կարգեցաւ՝ Բասենոյ իշխանն Ներսէ : Յամին 542, Պարսից պատերազմին մէջ, Յունաց հեծելազորաց հրամանատարն էր հայազգի Յովհաննէս Թովմայեանը, որ ծանօթ է նաև թօշ մականուամբ : Ասոր 'ի Պարսկաստան և յԱվելիս զարած նահատակութիւնքը և Գետրա քաղաքին առման ժամանակ դիւցաղնական մահը, Պրոկոպիոս (Դ. 8) և Զամիեան (Բ. 246-248) լաւ կը նկարագրեն : Արտաւան Արշակունին, յամին 545, կայսեր գէմ ապօստամբող Ալֆրիէն նուաճեց . նախ ստացաւ անոր դքսութեան տիտղոսն, ապա հիւպատոսութեան մեծադոյն

աստիճանը, և զԳոթացից հալածեց 'ի Սիկիիոյ : Ո՞վ չէ հիացած թելիսարփոսի աջակից և բարձակից Ներսէս մեծ պատրիէն վրայ, որուն անունը յաւերժաբար կապուած է իտալիոյ ազտութեան պատմութեան հետ կայ արդեօք ազդինչ բարեմասնութեան, զոր երախտագէտն կըրոպա ընծայած չըլլայ այս մեծահոգի անձին : Հանճար, իմաստութիւն, հաւատարմութիւն, անձնազոհութիւն, քաջութիւն, զգաստութիւն, վեհանձնութիւն և ողորմածութիւն անձնաւորաւած էին 'ի նման : Նա յաղթական հանդիսացաւ Գթաց և Գերմանացոց գէմ : Փրկեց զիտալիս, սպաննեց զահաւորագոյն թշնամին Յունաց զՃոտիզաւա և զբուտիզիոս : Հայ էր Արտաւազ, որ սպաննեց զվիլար և առաւ ըզչուաւննա 'ի Գթաց : Հայ էր Ընծուզ, որ յաղթական հանդիսացաւ Հոկասայ բռնաւորին և Գթաց վրայ : Հայ էր Վարդան Բ, որ սպաննեց զԱլորէն : Պարսից զօրավարը : Հայ քաջազանց կարգէն էին Հրահատ, Սահակ և Համազասպ, զորս յիշէ Պրոկոպիոս (Պարս. Ա. 12, 15 և 19) : Արտաշիր, Գրիգոր և Վահան, որը ընդ Արտաւանաց նշանաւոր եղանում միայն Խոսրովու և Կաւատոյ զօրացը գէմ : ըրած յաղթանակներովն այլնոյն իսկ, ըստ վկայութեան Պրոկոպիոսի (Վան. Բ. 24-28), սպաննեցին զինթար Ալֆրիէկի թագաւորը և անոնց աշխարհը ընդ տէրութեամբ կայսեր նուանեցին : Հայ հանճարներ էին : Միւս ոմն ներսէս՝ զոր կենդանուցն այրեց խուժն Փոկաս, այսպէս նաև Վարազտիրոց, Թէոդորոս, Սմբատ կիւրապազատ և Դաւիթ Սահառունի՝ ազգաւ հայ էին : Յամին 788 զօրտպեսն Մուշեղ այնքան ազգեցաւթիւն ունեցաւ Յունաց բանակին վրայ՝ մինչև զօրքը ուղղեց զինքը կայսր անուանել : Արշաւիր՝ գանձագետ և պատրիէկ ըլլալով, յամին 843 բիւզանդական կայսրութեան գլուխն և անցաւ : Մուշեղ Ցըռոնցին, Թէոփիլոս կայսեր ժամանակ ստացաւ պատրիկ, մեծ իշխան, կեսար և մագիստրոս մականուամբը : Մի և նոյն ժա-

մանակ լրամիկնեանը՝ Յունաց արևելքան զօրաց սպարապետ եղաւ . շատ մեծ յաղթութիւններ ըրաւ Մահմետականաց դէմ, աղասեց ըզկայսրն 'ի գերութենէ և անոր մահուանէն վերջը՝ արքունեաց և թագաժառանդին հոգաբարձու կարգեցաւ, վերջապէս Խուզան իշխանը՝ որ յամին 754 Արարագուց մեծ կոտորած տուաւ և Մելիթինէ և կարին քաղաքները Յունաց վերադարձուց, կ'ըսե՞լք պարծանօք թէ հայ էր :

Յետ յիշելց հայազդի հանճարեղոց և քաջաց անուանքն և գործերն, այնուհետեւ կրնանք եղբակացընել, թէ այս եղական դէպքը (այսինքն է, ոչ մի ազգ կարաց ընծայել ուրիշ ազգի մը, թողթէ պետութեան մը, այնքան թագաւորներ, ինչպէս ընծայեցին Հայք բոլոր Ասորեստաննեաց, Մարաց, Գարսից շըրջաններուն մէջ, մանաւանդ այս ժամանակին), շատ լաւ կը հաստատէ՛թէ ինչպէս մարզպանութեան ժամանակն՝ այս պէս նաև Բագրատունեաց թագաւորութեան ատեն՝ հայ ազգը աւելի բարգաւաճ էր քաղաքականապէս և զինուռական հանճարներով և թէ բարցապէս մեծ ազգեցութիւն ունէր յան տարերաց վրայ :

Հայաստան յթ դարէն սկսեալ բաժնուելով 'ի բաղում թագաւորութիւնս հանգոյն հնդոյն ելլադայ, այնուհետեւ արասքին թշնամիններէն աւելի ներբառապէս հարկ էր որ Ջատէր, Չէր մարթ Հայաստանի երիարատնեւ և միաձոյլ կազմակերպութեան մ'ակնկալել՝ քանի որ այս հետեւեալ արգելենները կը ցրուէին անոր կեղրոնական ոյժը . Ա. Մէր աշխարհին ընդարձակութեանն և այլնայլ նահանգաց բարձրագոյն լեռանց գոտիններով իրարմէ անշատուած ըլլալուն պատճառաւ. Բ. պատճառն հայ ազդի նախարարաց այլեայլ ազգերէն առաջագային էր, որով չէին կրնար դիւրա իրարու փառաց և բարձրութեանը ներբէ խոնարհիլ. Գ. այն ժամանակի վարչութեան առանձնութիւն սիրող կամ բռնաւորական եղաւ-

նակն, որ ամեն ազդաց մէջ հասարակ դարձած էր :

Որչափ որ իրգք Հայութեան բունը իւրացուցած էր իւր զանգուածին հետ այն պլատարր պատուասամնեն, որոնց վրայ խօսեցանք, սակայն բոլորովին չէր եղծած անոնց բնասուր յատկութիւնքը. Բագրատունեաց թագաւորութիւնն անգամ, որ թէպէտ և քան զամենքը զօրաւոր էր, չի կարողացաւ իրը բռն Հայութեան պատուասամն պահել միշտ զանոնք ընդ իւր վասն զի նախ՝ անոնց իւրաքանչիւր տոհմը, կ'ուզէր առանձին Հայութեան բռն համարուիլ և խնամակալ ամենուն. Բ. կը պակասէր հինաւորց բռնն և Հայաստանի կերպունաձիգ զօրսւթիւնն, կ'ուզեմ ըսել՝ Արշակունեաց թագաւորութիւնն և անոր զօրաւոր ազգեցութիւնը :

Յիւրատի, կը տեսնենք յընթացս պատմութեան ազգիս, որ Արշակունեաց հարստութեան ժամանակն իսկ կային բոլոր այն նախարարական տոհմերն և Հայաստան քան զայն շատ աւելի ընդարձակ էր. բայց այսպիսի անմիանալի հերձուած և ինքնավարական բաժանումն չունեցաւ: Եթէ ունեցաւ երբեմն, շուտով ևս կրցաւ անդրէն ամփոփաւիլ. Արովինեակ յայսպիսի գէպս՝ երբ ամենքը կը լսէին Արշակունի անունը, ամեն բան կը մոռանային և կը միանային այն միապետող կեզրոնին հետ: Իսկ որովհետեւ այս կեզրոնական միութիւնը 'ի վազուց արգէն կեղրոնախոյս և վանիչ զօրութեանց վերածուած էր, այն պատճառաւ չի պիտի կարենար Հայաստան ընդերկար զինքը շըրջապատող ազգաց գէմ գնել:

Աւտոի մէկ կովմէն Գարսիկը. Արարացիք, Մարմատացիք, խաղիք, Վիզը, Սկիւթացիք, Սելմիգեան թուլքերն և Մուղալ թաթարներն, միւս կողմէն ալ թոյնք կ'արշաւեն՝ ի Հայաստան իրենց անդթութեանց գերը խաղալու համար: Ոկոմի, Արծն և Անի, Հայաստանի ամենէն բազմամարդ քաղաքներն՝ ամեն օր նորանոր աղետից տեսարաններ կը ներկայացընէին:

Սակոյն այն հնագոյն ազդն՝ որուն արմատը Հայաստանի արդաւանդ հողին վրայ խորագոյն արմատացած էր՝ չեր կրնար դիւրաւ այն հարուածներովն արմատախիլ ըլլալ։ Բատ վկայութեան պատմագրի ուրումն, Հայաստանի միջնադարեան ինքնավարութեանց գոյութիւնն ՚ի վան և յամնուրն Անի ոչ միայն էին կարեսը նեցուկք բարգաւաճման հայ ազգին, այլ նոյն իսկ Ստորին պետութեան ընդհանուր շահ։

Ինչպէս երեւմն Տիգրանակերո՛ ՚ի հարաւային սահմանած այրս Հայաստանի, այսպէս ևս ոյժմ Անի է բնակարան և ապաւեն քաջացն Հայոց կայսրն Մոնումիսխոս՝ Պարսից թագաւորին Շապիոյ նման զանազան արշաւանքներով կ'ուզէ փորձել իւր բաղդը։ սակայն միշակուորածով յետո կը վանուի Գտագիկ թագաւորին։ Այլ շրջակայ ազգաց և Հռոմոց չի կրցած զործն՝ ՚ի գլուխ հանեցին երկպառակութիւնք նախարարաց և ամօնալի դաւաճանութիւն հայրենատեաց Վէստ Սարգսի։ Այսպէս ուրեմն Բագրատունեաց թագաւորութեան հետ կը կործ անի մասամբ ինչ նաև թագաւորանիստն Անի։ Բայց ոչ միայն ըկ տիրապետութեան առթիւ, այլ ազգակցութեամբ կապուած լինելով վրաստանի հետ, կըսէ Շվեյցէր Լէրիսենֆէլտ իր մէկ երկասիրութեանը մէջ որ կը կոչուի Հայաստան կամ Արարատուն գարառ (Ցես Փորձ, Չորրորդ տարի ։ Փետր. Էջ 33), վերստին ՚ի հանդէս հանեց յընթացս յաջորդ դարուց փառահեղ թագաւորներ և տիրապետողներ, որոնց կարգէն էին Զաքարիա Ալավասաւալարն և անոր եղբայրն իւսնէ Աթարէջը և Դաւիթ, որոնք յետ մեծամեծ գերեր խաղալու ՚ի պատմութեան հիւսիսային ազգաց, հուսկ ուրեմն յամին 1802ն վրաստան, կափէթն և իմէրէջ Ռուսաց ձեռքն անցնելով, 1200 տարուց թագը վար դրին։

Մետասաներորդ դարէն ՚ի վեր բարբարոսաց անդադար արշաւանքներով խոյս տուած էին քաղաքականութիւն և արուեստք յԱսիսյ դէպ յԵրոպէ։ Հարկ

էր որ զանոնք սիրող և մշակող ազդն ևս անոնց ետեէն երթար, վաճառաւականութեան պարապող դասն՝ արդէն իսկ ցրուած էր ՚ի տար աշխարհ։ իսկ յամին 1239 վերջին և բոլորական կործանումն Անուայ ՚ի Զարմանդանայ կը բերէ նոյնպէս վերջին վտարանդութիւն ժողովրդեան, ուր մեծ մասն աշխարհիս Հայոց ժողովեալ էին, ըստ վկայութեան Մատթէոսի, ինչպէս Հրեայք՝ յԵրուապէմ ՚ի ժամանակի կործանման, կը թողուն Հայք իրենց հայրենիքն, ոմանք գերեվարութեամբ, ոմանք ինզգանգը սոտարազգի թագաւորաց կամ դաղթականութեամբ։ իսկ այլք մազապուր փախըստեամբ։ և այն ազգերը զորս Հայաստան դարերով յառաջ ծնաւ, սնոյց և քաղաքակրթեց, կ'ընթանան կողոպատել զայն։ իսկ Հայաստան կը մնայ միշտ Հայաստան, և հայազգի յաջորդութիւնն իսպառ չմնհետանար անտիք Թէպէտ և 25-30,000,000 ժողովրդէն ոտկաւք կը մնան բուն հայրենի հողին վրայ՝ անոր տիսուր աւերակներն ողբարու։ կը դիմեն գունդագունդ ՚ի համաշխարհի օտարուին, տանելով ՚ի միասին զվաճառականութիւնն, արուեստու, և խողաղասէր և վաստակաւոր ժողովրդեան մամնային բարեմասնութիւնքը։ Գնա՛, ազգ, ամեն հոռաւոր տեղերն, և անիշխանութեամբդ հանդերձ ձեռքդ կարկառէ յօդուանաև այն մասին մարդկութեան, որոնց իշխանութեանդ ժամանակ թերեւս առիթ չունեցար բարերու։ իւ եթէ սույզ է այս առածն, թէ Հայք՝ օտար ազգաց լուր և հաւատարիմ ծառայուղը են, իսկ իրենց հողին՝ վստ տեսնեմներ, զէթ յայսմ թող կատարուի։

Այսպէս Հայք ցիր և ցան կ'ըլլան ՚ի սփիւռա պղգաց։ Ավային ինչպէս Փիւնիկեցիք իրենց դադթականութեամբը սպառած ժամանակնին՝ ծաղկեալ ժողովուրդներ և կղզիներ կանգնեցին իրենց շրջակարքը, այսպէս ևս կը կրնանք ըստէ թէ Հայ ազգն ուր որ ոչնչացաւ իւր սակաւամասնութեանը պատճառաւ, հօն կանգուն թողուց բարերա-

բութեանց և արարուածոց արձաններ : Խսկ ուր որ մեծամասնութիւնը ունեցաւ՝ կարող եղաւ վերտին հաստատել քաղաքական և աղջային ինքնավարութիւն : Ասոնց վրայ հետեւել գլխուն մէջ պիտի խօսինք :

Գլուխ ը

Հայր 'ի Ելիկիս կամ Ռուրինեակ քաղաքութիւնն : - Երևելի իշխանը : - Հայոց այս ժամանակի քաղաքականութեան եղանակը : - Խաչակրութիւնը Արևմտայց՝ յիշելեն : - Հայ ազգական ասպետական ժամանակը և մեծամեծ ձեռնուուրդ հետեւանքան լիրեմուեայ : - Բիզանտիական հայութեան պիտիկ : - Հայոց վահանականութեան տարածութիւնն և հզոր ազդեցորենիք արևմտականութեան և արուեստից վրայ : - Կարենը եղանակարին մը :

Կիլիկիա՝ Եփրատ գետով միայն կը զատուէր 'ի Հայոց Մեծաց, և արդէն Փոքր Հայոց մի մասը կը կազմէր : Այս լեռնային՝ բայց քարերեր աշխարհն, որ Արամէն սկսեալ մինչև ցմիջին Տիգրան և անոնց յաշորդող Հայկազունի և արշակունիթարաց գաւազանին տաւ կը ծաղկեցաւ, յամին 1080 թագաւորական չորրորդ Հարստութեան հետ գեղեցիկ շրջան մի ևս ժամանակի կը ներկայացրէն : Հօս՝ հայ ազգն վերջին անգամ մ'ալ պիտի ցուցընէր ոչ միայն իւր զինուորական հանճարը և ասպետական քաջագործութիւնը, գողացընելով զիկիս Մանուէլ և Եղիպատոսի խաներն, այլ նոյն իսկ ազգի ազդի յառաջանեան, անդամանութեան գործութեան և ասպետական միանալիք պիտի հանդիւր է դարսութեան անդէն և անդ Յոյնք . կը տիրեն Հայք բոլոր Տորոսի ամրութեանց . և այն անմատոց միջնարերզին մէջ կը վերականգնի Հայ ազգի ինքնավարութեան չորրորդ հարստութիւնն, զոր մարթ է Կոչել շարունակութիւն ինչ երրորդ հարստութեան անոր հետ ունեցած ազգականութեան և ժամանակի մերձաւորութեանը պատճառաւ :

Եթեաւ, իրբեւ յայանի և ստոյդ ճըշմարտութիւնն, կը տեսնուի յընթացս պատմութեան, թէ հայ ազգը նոյն իսկ իւր յետամացութեան և խոր ադիտութեանը ժամանակ, միշտ խոյս տըւած է 'ի քարբարոսութեանէ և խաղա-

դաւէտ կենաց և բարգաւաճման յարմար գիրքեր գինուուած, զինքը շրջապատող խուժ ազգաց և ժամանակաց մէջ ապրելով հանգերձ : Այսպէս ուրեմն յակիշատակ ժամանակաց՝ 1300 արդի նախ քան զբրիստոս, սկսան Հայք ամրանալ 'ի լերինս կիլիկիոյ, Ոմանք հինաւուրց փիւնիկեցւոց և Եղիպատացոց և Միկետացցոց հետ վաճառաշահութիւն ընելու առթիւ . ոմանք Արամայ, Արտաշիսի և Տիգրանայ աշխարհակալութեան ընթացիցն հետևելով . իսկ այլք հուսկ ուրեմն՝ Արաբացցոց, Թըրքաց և Յունաց խժդժութիւններէն աշատելու պատճառաւ :

Յետ ցաւագին և ողբերգական մահուան վերջնյ պայազատին բագրատունեաց թագաւորութեան, այսինքն յամին 1079 կամ 1080, երբ հուրէն մերձաւոր ազգական գագկայ և ականատօս անոր աղետից, ինչաւ այն անառիկ ամրութեանց մէջ, այնուհետև Հայք առիւծի կորեանց պէս սիրտ առած, ազգատութեան գոյիւնով ոտք կ'ելլեն : Տարագիր կ'ըլլան անդէն և անդ Յոյնք . կը տիրեն Հայք բոլոր Տորոսի ամրութեանց . և այն անմատոց միջնարերզին մէջ կը վերականգնի Հայ ազգի ինքնավարութեան չորրորդ հարստութիւնն, զոր մարթ է Կոչել շարունակութիւն ինչ երրորդ հարստութեան անոր հետ ունեցած ազգականութեան և ժամանակի մերձաւորութեանը պատճառաւ :

Այնուհետև յերեան կու գան յընթացս հայ պատմագրութեան՝ Ծուրէններ, Օշիններ¹, կոստանդիններ, Թորոսներ և Լեսններ, փոխանակ քաջազարմ Սմբատներու, Աշոտներու և Գագիկներու կարսայ, Պայէզիտի, Անուայ, Երզնկայ և Մեծ Հայաստանի ուրիշ բերդաբազուքաց տեղ՝ 'ի վեր կը բարձրանան անմատոց ամրութիւնք Սեբաստիոյ, Տարոսնի, Մոփսուեստայ, Անար-

¹ Հայոց վկայութեան Աւելասեայ կոմենսոսի, էր նա 'ի զարմէն Արշակունեաց, նոյնը կը հաստատէ նաև Ռատուղ գենուաց (Gesta Tancoredi Cap. XXXIX et XL) Արշակունիկ կոչելով զաւ . և

մէծապէս կը դրուածէ հայ իշխանին պատերազմական հանճարն, որով առաւ վկանաց 'ի թըբաց :

զարայի, Առանայի, Սըսոյ և այլոց 90
քաղաքաց և դզեկաց Փոքուն Հայոց,
զորս յանուանէ յիշէ պատմիչ ոք՝
մ՛ւր թողունք այս ժամանակի նաւա-
կան զօրութիւնն, յորմէ կը պահասէր
Բագրատունեաց թագաւորութիւնն.
խսկ Ռուբրինեանցն՝ ընդ ծով ևս հաւա-
սարապէս կը շահաւասակի անով, և Միջ-
երկրականը անոր ասպարէզ կը գառ-
նայ:

Որչափ և փոքրիկ էր Հայոց այս թա-
գաւորութեան սահմանը՝ նիւթապէս,
այնչափ ևս կեդրոնացեալ կը տեսնուի
և միանդամայն ընդարձակածաւալ իւր-
բարյական զօրութեամբը։ Թերևս նոյն
իսկ Տիգրանայ Բ օրերն այնպէս սերտ
վերաբերութիւն ունեցած ըլլայ հայ
ազգն Արևմտեայց հես, ինչպէս ունե-
ցաւ այս շրջանիս մէջ Լեռններու և Հե-
թումերու ձեռքով։ Սակայն Հայաստա-
նէն աւելի՝ Երբոպայիք և Հռոռմէ պի-
տի վայելէին անոնց բազմապիսի ար-
գասիիններն :

Նախախնամութիւնն աստոտածային,
դեռ հայ ազգին ինքնավարութիւնը
շանհետացած՝ ի միջյ և անոր ազգե-
ցութիւնը չի նուազած, ուղելով վեր-
ին անդամ մ'ալ գործածել զայն՝ իւր
անքնին խորհրդոց և տեսչութեան կնի.
Քը տպաւորելու մարդկութեան անցե-
լցն մէջ, նախ ինքը ձեռնտու կ'ըլլայ
անոր բարոյական և քաղաքային յա-
ռաջադիմութեանը: Ուստի իրօք ա-
րուեստք, գիտութիւնք, մշակութիւն,
վաճառականութիւն այս շրջանիս մէջ,
ոչ միայն չեն կորսնցներ բնաւ իրենց
նախկին փայլն, այլ մանաւանդ թէ
երոպական ազգաց հետունեցած սերտ
յարաբերութեամբն՝ ևս քան զես կը
բարգաւածին, զորս յետոյ պիտի տես-
նենք:

1 Հանագարեան. Հմա. Պատմ. Հայոց. էլ 94:
Բարիկ 1856:

2 Մատթ. Առևշայեցի, Վարդան պատմի,
Միքայէլ Ասորի, Գրիգոր, Ներսէս Կայսեցի,
կիբակոս, . . . Մահաւոր յիշատակութեան և
ուշաբրութեան արքան է Տօրիապուր ե-
պիստապին Եպիմանէս Դարտօնէլ Հայոց իշ-
ակառա պատմութիւնը, որը 1881ին առա. Պ.

Վերնախնամ տեսչութեան այդ մեծագոյն գործն՝ էր ազատել զանօրինական տեղին և զբրիստոնեայս ՚ի խըժդութեանէ անհաւատից, և ազատել գործակցութեամբ ազգաց և ազանց: Էր համախմբին ամենայն քրիստոնեայ պետութիւնը էւրոպիոյ յազատութիւն Ս. Երկրին: Էր համախմբէ նմանապէս հայ ազգն յարեւել իւր գորութիւնն՝ յամենայնի ձեռք կարկառելու անոնց: Եւ սատուգիւ Հայք են միայն բարեկամ և գործակից խաչակրաց բոյր արևելքի մէջ, կ'ըսէ պատմութիւնն՝ կրնանք ըսել նոյնակս և մենք թէ խաչակիր արշաւանաց յաջող եից և ձախորդութեան բազգը կիլիկիաբնակ Հայոց բարեկամութենէն և կամ չարակամութենէն գոզցես խապառ կը կախուէք: Բաւածնիս չափավանցութիւն չէ, մանաւանդ երբ այն ժամանակի Արևելեան և Արևմտեան պետութեանց իրաց և անոնց հանգամանացն լաւ ուշ զնելու ըլլանք:

Խաչակրաց գործերն անմահացնող
արևելեան և արևմտեան պատմագիրք չ
կը վկայեն, թէ Պարսիկը, Եղիպատացիք
կամ Սարակինուք, Արաբացիք, Թուրքը
և Սկիւթացիք, որոնք քրիստոնէութե-
նէ Քերջը ընդհանրապէս վնասակար ե-
ղան մարդկութեան մանաւանդ Եւրո-
պայիք քան թէ օգտակար, արդէն իսկ
միաբան զինուած խաչամականուրեան
կամ մահմետական կրօնից և դրօշի ներ-
քն Խաչակրաց կամ Արևմտեացց դէմ
կը պատերազմէին : Սակայն երբ Խա-
չակրաց առաջին արշաւանքով Արևմտ-
ակայք անխոհեմաբար և 'ի փառափ-
րութենէ թելսպատաճ՝ սկսան յամին
1097 ամբապետել նաև կ. Պօլսոյ, այ-
նուհեան Ցոյնիք ևս յաւելան 'ի թշնա-
մին Եւսպառուոց իւ անրափ աւելի ա-

Տեսուցրէ յաջորդ հայտքէ ան Ողիսև Ռոպէրգ .
Դուի մատենագրանին մէջ : Եւոպէրը ձնվԱ
լուսիներէ կը բաշխանայ և Ծջ գարուն գրաւած
է , շատ որ և կարուր բաններ կը պարունակէ
իւ մէջ : Կը յուսանք թե քիչ ատենէն հրատա-
րակութելով մեծ լոյս պիտի ծագէ մէր առհմային
պատմութեանը զբայ :

հաւոր է ասոնց թշնամութիւնն Արևմը-տեայց, որչափ որ մեծ է նախանձն և գոռողութիւնն Յունաց, մանաւանդ քանի որ ընտանի են անոնց՝ հեռն և զաւաճանութիւնք, Մատթէոս ¹ Շուռհայեց, ցին, թէպէտ և համառօտ բայց լաւ կերպով կը հաստատէ զայս, ըսելով. «Ինդ որ անցանէին (Խաչակրք), գային ամենայն աշխարհ (Թօնիք)՝ ի վերայ նոցա և նեղէին զնոսա բազում շարժարանք ու:

Այսուհետեւ Ցունաց դաւադիր նեն, գութեամբը զրեթէ միշտ անյաջող կը ընթանան իր արյաւանացն Արևմը-տեայց: Լուգովիկուներու, Ռուսովիներու, Փրեդերիկուներու, Պեմունդերու, Պալտովիններու, կոնդուրիէի, Տան, կրեաեց և անոնց համանման դիրաց, զանց ասպետական քաջադործութիւն, քը, ոչ միայն իրենց նպատակին չեն հասնիր և չեն միխթարեր զերոպէ, այլ մանաւանդ յաճախ կը շրջին ՚ի վիսս և ՚ի կորուստ նորին: Ամրովիա, կան բանակներ՝ բարբարոսաց խթժդութեամբ զինուց և զօրաց, զորա այն ժամանակի քրիստոնէից կրօնական եռանդը դիւրաւ կը համահաւաքէր նոյն իսկ ՚ի մենաստանաց և ՚ի համաշարանաց, Եւրոպա չի կրնար յաջուղիւ ընդդէմ այլակրօն ազգայն Արևմելքայց, յորս չեն պահուիր բնաւ օրէնք և իրաւունք ազգաց հասարակաց. վասն զի վտակը գետոց և ազբերաց և նոյն իսկ օգը՝ դեղ մահու կը պատճառեն անոնց:

Նախ քան զձեռնատութիւն Հայոց, Արևմտեան պետութեանց զոհերն մեծ են յարեւես: Եւրոպէ երկուստեր սրոյ մէջ ինկած՝ յուսահատ և վաստակաբեկ կը տուայտի: Զէ կարող նա ետ կենալ այն արշաւանքներէն առանց

համայնածախ կորստեան քրիստոնէից, որոնք յարեւելու կը գտնուիր: Վասն զի յարեւմոնից՝ կրօնասէր ժողովրդոց ձայն զցու ընդ հզօր ազգեցութեան քանայապետաց՝ զանոնք յառաջ կը մը զեն: իսկ յարեւելուց ալ քրիստոնէից և սրբազն տեղեաց անդադար ողբն և ազդակն անոր կարեկցութիւնը կը շարժեն: զցու ընդ վրէժիւնդրութեան պատույ: Սակայն չէ կարող նմանապէս յաղթանակ կանգնել Արևմտուք՝ զնըշան Ս. Խաչին՝ իւլամական բռնակալութեանը վրայ արևելքի անձանօթ, վրտանդալից և հեռաւոր աշխարհաց մէջ, առանց ուրիշ կրօնասէր ազգի մը և զօրաւոր գալչնակցի մ'օգնութեան: Ահաւակի այլ կրօնասէր ազգն և հզօր զաշնակիցն է Տորոսի լերանց կամ Կիլիկիոյ պէտ բարբերեր և անմատոյց երկրին իշխող հայ ժողովուրդն. որ ոչ միայն քաջահմուտ է արևելքան աշխարհաց դրիցն և բնաւորութեան ազգաց, այլ և նենդուպատիր գաւաճանութեանց Յունաց փորձ. և որուն հզօր զօրութիւնը նախ քան զամենայն իմացան ² Պալուովին և Գեմունդ՝ իշխանք Մարաշու և Անտիքայ:

Ուստի այսուհետեւ կը ցուցընէ մեզի պատմութիւնը ոչ զՊետրոս ոք միայնակեաց և ոչ քթեռնարդոս, այլ աստի զկայսերսն ³ Գերմանիոյ զգիրեդերիկոս և զէներիկոս Զ, և անտի զիլեհադոյն քահանայապետս ⁴ Եկեղեցւոյն Քրիստոսի զիննովկենտիոս Գ, զիւգինէոս Գ, և զկեղեգեստիոս Գ, որոնք կը դիմեն առ Հայոս իրեւ աղերսարկուք և յորդորիք ՚ի խաչակցութիւն, ընծայատրութեամբ նշանի զիսխաւոր առաքելոյն Պետրոսի և Պօղոսի:

Տեմանենք ուրեմն յարեւելս և յարեւուս կոյս՝ Հայոց այս ժամանակի ա-

1 Ժամանակագրութիւն, պատմ. Ա. Խաչակր. թղթհամ. Ո:

2 Վասն զի Լոռի Ա. հետ պատերազմած ժամանակ՝ մզուեցան ՚ի քաջացն Հայոց միջն ցԱնտիք: Դարձեալ Ռայաննատի ազաւանց հասան Հայոց և արշաւարքին զԱնեկիա, հալածեղով անտ զՅովհաննէս կոմենսոս:

3 Իսկենէոս Կոււանիոյ. Ճառ. ՚ի վերայ պատմ. Հայ. էջ 20: Collection des hist. des crois. Docu. armén. Introduction, p. LIII.

4 Կելեւս Կաչ. Միար. Եկեղ. Հայոց. Ք. ի. Բ. Քրիստոֆոր Լուքացի. Պատմ. Հայոց. Ք. ի. էջ 5:

բարուածքն և գործակցութիւնքը : Յա-
մին 1097—1098 առաջին խաչակիրք
յետ մեծամեծ կորստեան և նեղու-
թեանց , զրոյ կրեցին 'ի Յունաց , կը
համին 'ի Փոքրն Ասիա : ՅԱՄՊՐԻՄ ա-
նող համաւուս ճամբան էր կիլիկիա ,
ըստ իրէնէոսի կուասկոյի , կոնտորէ ,
Պաղտն , Զննիլ և Տանգրի կ'իմացնեն
Արևմտեայց գալուստն՝ Աւոհայեցոց
իշխանին Թորոսի և մեծ իշխանին Հայոց
կոստանդնի , կը յաւելոյ Մատթէոս¹
Եղեսացի , և անոնց օգնութիւնը կը
ինդրեն : Շուտով ընդ առաջ կ'երթան
Հայք Արևմտեայց , և սիրալիր ընդու-
նելութեամբ կը միանան անոնց հետ :
Հաւատարմութեամբ կ' առաջնորդեն
Խաչակրաց անթիւ՝ բայց միանգամայն
անբարեկարգ բանակին՝ Տորոսի ան-
ձուկ և գտուարին լերանցամէջներէն ,
յորս իրենք միայն առփեծի պէս գի-
տէին քաղլութեամբ շարժիլ գ հօն ինկ-
նող թշնամեսց բանակները սրոյ և մա-
հուան ճարակ տալ : Հայոց ամուռ ա-
մուռ քաղաքաց մէջ կը հաստատուին
Եւրոպական պետութեանց զօրքերն , և
պատերազմի կը պատրաստուին . Հայք
ամենայն կերպով ձեռնոտու և օգնական
կ'ըլլան անոնց : Արևմտեան պետու-
թեանց այլեայլ դրօշուց հետ կը ծա-
ծանի նոյնպէս Ռուրինեանց կարմիր
կանանց և սպիտակ դրօշը խաչակիր
բանակաց և կիլիկոյ բերդելուն վրայ :
Ժամանակն արդէն իսկ ասպետաց ժա-
մանակ է . ասպետական պիտոր ըլլան
այսուհետեւ Հայոց քաջադրութիւնքն
և ձեռնարիկն : Անուանք Օշի , կոս-
տանդնի , Թորոսի և Անոնի պիտի յա-
երժանան ՚ի գիրս պատմագրաց խա-
չակրաց և յերգս քերթողաց , զցյ ընդ
առպետական անուանց կոնդորէի ,
Տանգրետեայց , Պուլլոնի և համանմա-
նեաց :

Հայք թէպէտ և թուով սակաւ , բայց
քաջագործութեամբ և գործունէու-

1 Ժամանակագրութիւն . Հատած . Բ . Դ . Բ .
2 Collection des hist. des crois. Docum. armen. Introduction, p. LI.

3 Ռոռէրդ . Պատմ . Խաչ . Կամ Փրանկաց ՅԱ

1 թեամբք յամենայն 'ի ճակատամարտս
զուգահետ կը նահատակին ընդ Արև-
մաեայց , ըստ վկայութեան Տիւլրիէի²
և Լանկուայի : Յամին 1098 կը պաշա-
րեն խաչակիրք զինատիոք : Սակայն այն
պաշարման երկարաձգելուն առթիւ ,
բանակին պարէնը կը հատնի : Սաստիկ
սով մը կը տիրէ խաչակրաց բանակին
մէջ խառնադան բազմութեան աղե-
տից և մեռելոց թիւն օր քան զօր կ'ա-
նի Պաշարումը վերցընելն ամենազը-
ժուար է , վասն զի ոչ միայն մինչեւ այն
ժամանակ ըրած կորուատնին անվարձ
կը մնայ , այլ մանաւանդ թշնամիք սիրտ
առած և յախուռն յարձակմամբ սոս-
կալի կորուստ կը սպառնան ՚ի թիկանց :
Հաւատարապէս վտանգաւոր է երկա-
րաձգել այն քաղաքին պաշարումը : Ո-
րովհետեւ պատմութիւնը³ կը վկայէ ,
թէ յեզիգիպոսէ , 'ի Պարսկաստանէ և
յամենայն կողմանց զօրամողով ե-
ղած այլազգիք անթիւ զօրութեամբ ա-
նոնց վրայ կ'ընթանան : Այս 'ի նկատի
ունելով անշոշտ , կ'ըսեն Մատթէոս⁴
Աւոհեցին և Փուլքերիս Յ Քորնու-
ղացի , թէ Խաչակրաց բանակին հետ
նաև Քրիստոնէութիւնը մեծ վտան-
գի մէջ էր : կը հասնին յանակին .
կալ ժամու Ծին՝ տէրն Լամբրոնի , Բը-
զունի , Գող Վասիլ , Ապիթրատ և կոս-
տանդին , բերելով անբաւ առատու-
թիւն կերակենդինց այն սովալլուկ
բանակին , զէկը , երիվար , կազմած , և
գունդս ընտիր հեծելոց և աղեղնաւո-
րաց Հայոց , և սաստկացըներով քազ-
քին պաշարումը , կը ստիպն զինա-
մին և քիչ յետոյ կ'առնուն զայն :

Եատ զարմանալի էր եռանդն և գոր-
ծունէութիւնն հայ ժողովրդեան և ճրդ-
նասուն անդամ կրօնաւորաց , որոնց
համար կ'ըսէ Մատթէոս Աւոհեցի
այսպէս . և Նոյնպէս վանօրեայք Սեաւ
Երին՝ կերակրօք օգնէին նոցա . և ամե-
նայն բազմութիւնք հաւատացելոց բա-

1 Գելլու . Գելլու Դ . էլ 48 , 49 , 50 :

2 Հատած . Բ . Դ . Բ .

3 Recueil des hist. des erois. occidents , էլ
341 և 342 .


բեկամութիւն ցուցանիէն նոցա» : Այս
յաւէտ լիշատակաց արժանի բարե-
գործութեան հետ՝ նաև Մարգեկ և Աս-
պետ վերադիրներով կը փառաւորին
անսուանք հայազգի իշխանաց : Սակայն
այս դեռ առաջին քայլ կը համարուի
Հայոց վասեմական գործոցն՝ այն ընդար-
ձակ ասպարհօթին մէջ :

Յամին 4418-4419, ըստ վկայութեան Ռուհյացեւոյն և Մշքայելի Ասորուոյ, Անտիգայ իշխանը Ռոդէլը՝ Աղաղ Քաղաքին քով 30 օր պատերազմելէն վերին ընդդէմ Տաճկաց՝ կը յուսահատի, և կ'ուզէ յետո նահանջիլ։ սակայն անդէն օգնութեան կը հասնի Լեռն՝ Հայոց Քաղերովն Ռոդէր ինքը սաստիկ տկարացած ըլլալով, Լեռնի կը յանձնէ վաղուեան յարձակումը, Հայ զօրաց նահատակութիւնը փորձելով։ Իսկ Լեռն, կը յաւելու պատմիչը, առիժաբար գոռալով՝ յարձակմամբ մը կը կատարէ իւր չքեղ յաղթանակը՝ և Հայոց Համբաւը ոչ միայն կը հոչակուի փուանկաց բանակին մէջ, այլ և ՚ի զօրս Տաճկաց, որովհետեւ յետ առևման քաղաքին մարդասիրաբար նուաճնեց զանոնք։ Այսպէս նաև ՚ի պաշարման երրուսա-

Այսպէս նաև՝ ի պաշարման կրուսա-
ղեմի և յամենայն պատերազմուն կը ը-
նանք ըսել ըստ պատմութեան, թէ
Հայք են՝ եթէ ոչ պարառածք, այլ միշտ
յաղթականք։ Բւստի եթէ բոլոր Հայոց
այս ժամանակի գործած ծառայու-
թիւնքը մէջ բերելու ըլլայինք, որոնց-
մով ձեռք տուին՝ եւրոպական պետու-
թեանց և ձեռնարկութիւնքն՝ ի գլուխ
հանեցին, ստուար հասորներ կը ձևա-
ցընէն։ Այլ մեծադոյն անձին և հեղի-
նակութեան մը վկայութեամբ միայն
բաւական կը համարինք եղբակացնել
մերայնոց օգնութիւններն, որուն ձայնը
առաքելական գահոյից սրբութենէն ա-
ւելի՝ իմաստութեան ամեռէն ևս ազ-
դու և գեղեցիկ կը հնչէ ասա. կ'ուզեմ
ըսել Գրիգոր ծգ, որ յամին 1534 Հա-
յոց համար գրած կոնդակին մէջ այսպէս
կը խօսի. «Բաց ի բաղմաղիմի երախ-

ւեաց՝ զղոս եցոյց աղզգի այդ առ և կեր-
նեցին և առ քրիստոսական ժողովուր-
դըս, արքանի է անմոռաց յիշատակի:
Միեւ ևս է գործն այն, զղո արարին
Հայք՝ 'ի գնալ իշխանաց և զօրաց քրիս-
տոնէից (Արևմտեայց) բազում անդամ
յառաւմն Ս. Երկրին: զի ոչ այլ ազգք
և ոչ այլ ժողովուրդք այնպէս յօժարա-
միտ և զուարթ ագին զանձինս լինծայե-
ցուցին՝ 'ի աստար օդնականութեան՝ որ-
պէս Հայք: որք զօրօք, երիվարօք, զի-
նուոք և թոշակօք, խորհրդով և ամե-
նայն նպաստիք ձեռնտու և զօրավիրդն
եղեն քաջութեամբ և հաւատարմու-
թեամբ առ քրիստոնէեայց յայնմ մեծի
և կարևոր ժամանակի պատերազմին :

Թէպէտ և կիլիկիոյ Հայք՝ 1079—1177
ունեցան իրութենի արքանաւոր յաջորդ-
ներ, որոնք ջանացին միշտ իփազնդա-
կան կայսրութեան լուծք թօթափել և
Հայոց աղքեցութիւնն ընդարձակել:
Թէպէտ և Լևոն Ա. այս նպատակաւ ա-
մուսնացաւ Պաղտինի աղջկան հետ և
Ռուբէն Գ. Հըմֆրէի դստեր Զապե-
լի հետ: Թէպէտ և Թորոս իւր աննման
քաջագործութեամբքն առաւ յլինմէտ
Մէկիք ամիրայէն՝ զվահկա, Մսիս, Ա-
տանա, Անրագաբայ, Թիլ և ուրիշ քա-
ղաքներ: Թէպէտ և նոյնն Անդրոնիկոսի
և կոստանդնի Կալամանոսի յաղթե-
լով՝ արդէն իսկ պարզած էր Հայոց ան-
կախութեան դրօն յամին 1144: և ըղ-
կիո Մանուէլ կերպով մը խոնարհե-
ցուցած, սակայն առժամանակեաց քան
երկարատի բաղդի յաջողութիւններ
կրնային համարուիլ, որուն անիւն դիւ-
րաւ կարող էր հորսիլ և զչայս Յու-
նաց հարկատուութեան դարձեաւ ենթ-
արկել: Ուրեմն Լևոն երկրորդին վե-
րապահուած էր ոչ միայն Հայ ազգին
ամբողջական վերանորոգութիւնն և եր-
ջանիկ ապագայն՝ 'ի լերին Տորոսի և
Փոքր Հայոց թագաւորութեանն, այլ
նաև բովանդակ Արևմտեայց՝ 'ի յա-
րեւելս, եթէն երուի մեզ ըսելու համար-
ձակութեան մասնաւու:



բաղմապիսի և վսեմ ձրիք ճոխտ ցեալ էր իշխանս այս, որուն պէս գլուխ մը 40 դարուց ՚ի վեր թերես ունեցած չէր Հայ ազգն, ՚ի բաց առեալ զվաշարշակ և զլիեծն Տրդատ իշխանական փառամիրութեան և քաղաքագիտութեան հետ միացեալ էին ՚ի բնէ ՚ի նմանակ խստակեաց վարը, լաւագոյն քրիստոնէի և մարդկային դիտութեան վեհ անձնաւորութիւնն : Իրեն առաջնորդութեամբ կ'ընդարձակի Հայ ազգն, կը յաղթանակէ շրջակայ թշնամեաց վրայ, կը կառուցանէ ամեն տեղ հիւնանգսոց, որբանոցու և ուսումնարանս¹ : Ընդ ծով և ընդ ցամաք ճամբաներ կը բանայ, և կը զարդացրնէ զմշակութիւն և զուուրեառս վաճառուց: Միով բանիւ, այն ժողովուրդն, որ ամբաստանուած է իբրև անմիաբան և յօստրա աշխարհս ցիր և ցան եղած, սքանչելի միութեամբ մը կ'ընթանայ զօրութենէ ՚ի զօրութիւն քիչ ժամանակի մէջ:

Խսկընդհակառակն Արևմտեայք կամ Եւրոպացիք, որոնք ՚ի սկզբան և յանտիրապետութեան՝ առ երկիւղի միայն միաբանած էին անհաւատոից դէմ, յետ տիրապետութեան արևելեան երկիրներուն և առժամանակեայ յաջողութեանց, հերձեալ էին ՚ի բազում հերձուածու և յիշխանութիւնս, և ամենամսուր արարուածոց տեսարաններ կը ներկայացրնէին այս միջոցիս: Եւ իրօք իբրև անմիջական հետևանք այսպիսի քաղաքական հերձուածոյց, յամին 187-189 Երուսաղեմի թագաւորութիւնն կ'ինայ ընդ լծով Սալահատինի յետ աղետալի հարուածոց, և ընդարձակածաւ կալ կայուածքն կոնդորբենայ կը գրաւին: Եղեսիս՝ որ յարևելից անմասոյց պատուար կը համարուէր Լատինացւոց տէրութեանը, 40 դարուց ՚ի վեր նուածուած էր Աթարէկ Էմաստ-Լոտինի, Զանկիի և Նուր-Էտարինի իշխանու-

¹ Կրնակը ըսկէ թէ Հայերէն ձեռաւգիրքն, որոնք կը գանունին այժմ՝ ի Ս. Ղազար, յաշխանին, ՚ի Վեհնա, ՚ի Բարեկ, ՚ի Մատրիս, ՚ի Գերլին, ՚ի Լոնտրա և յայլայլ մատենադա-

թեանցը ներքեւ, և ձօսլին՝ զրաւած էր իւր կենաց քաղցր օրերն՝ յաղէտս Հաւլէպի: Տիրապղի յերերի կայր: Պտղումայիս արդէն նուածուած էր բոլորովին և կը հեծէր անդադար անհաւատից իսխա հարուածոցը տակ: Անտիզը միայն կար կանգուն և աղաս, բայց կրղիացեալ և բեկեալ ՚ի զօրութենէ: և անհաւատից մողեգնութիւնն՝ համայնածին կորուստ կը սպառնայր բոլոր քըիստնէից:

Ի լուր այսպիսի ցաւակի դրութեան, յորում կային արարուածք արևմտեայց յայնկոյս հովուն, Եւրոպա չէր կրնար մնալ անսարբեր: Հարկ էր ուրեմն դարձեալ զօրք ժաղովիւ, իւր պատույն և կրօնից վրէմն առնլու: Համար: Սակայն այնպիսի ծանր վիճակի մէջ նոր արշաւանքի մ'ելին, ոչ միայն տարակուասական էր, այլ մանաւանդ Եւրոպայի համար շատ վտանգաւոր և լի աղէտիք: Քէտք էր որ ուրիշ ապահով միջոցի մը դիմէր Եւրոպա, որուն կացութիւնն հաստատուն էր արդէն, և իրօք յաջութիւններ կրնար խստանալ իրեն ՚ի նպաստ: Այս էր միակ միջոցն հաստատութեանց: Կ'ուկեմ ըսել, կիպրոսին որ Միջներկրականի մէջ բարձրանալով անմատչելի էր ամեն կողմանէ, և իւր նաւական զօրութեամբը մեծադոյն ապագայ մը կ'աւետէր քրիստոնէից, և վերագարձ անհաւացած բաղդին: Երկրորդ՝ թագաւորութիւնն Փիլուն Հայոց, որ իւր բարձրաբերձ լիրանց շղթաներէն և անառիկ բերձերէն աւելի, մեծին լեռնի Բհովանաւորութեամբը պատասպարուած էր, և արդէն իսկ շրջակայ աղդաց պատկառելի եղած:

Յիրաւի 25 տարի յառաջ երբ Փրեղերիկոս Պարպարսոսսա գլուխ անցած այն երրորդ արշաւանց, և Փոքր Ամիայէն անցնելով հասաւ լիկոնիոյ սուլթանին՝ Խիճամալանի երկիրը, մոլորե-

շաւ յանոպատս Աիկոյնից և դրեթէ ամբողջապէս որս ըլլապու մօն էին ոռ, վի և որածութեան թշնամեաց, Աւոն Մեծն և Գրիգոր Ապիքատ հասան յօդ-նութիւն, կ'ըսէ պատմութիւնն՝, և զար-մանքի ճարպակութեամբ աղատուցին խաչակրաց բանակը հանդերձ զերմա-նայի կայսերաւ:

Հայ ազգն այսպիսի արգեամբք ար-ժանացաւ ընդունել զթափն արբայրա-կան և զօդումն սուրբ ՚ի գլուխն իւր ՚ի Լեռն, կ'ըսէ կիրակոս, ՚ի ձեռաց կե-ղեատինսիք զ, և Հենրիկոսի Զ, զօր ըստ վկայութեան Վարգանայ Հ, ֆրե-դերիկոս անձամբ պատրաստեց, բայց յանկարծական մահուամբն ՚ի Սելլեկիս չհասաւ տալ իւր բարերարին՝ Լեռն յամին 1498 թագաւոր կը պասկու՚ի Ս. Սոփիա՝ Տարսոնի մայր եկեղեցոյն մէջ, որուն հանդիսակից կ'ըլլան ոչ միայն ծիրանսաւորն գննրատ Վիդէլ-պաղցի, այլ և ամենայն իշխանք և գունդք ասպետաց Գաղղիոյ, Գերմանիոյ և ի-տուիիոյ; Անոնց ներկայութեամբն և կեց ցէներով կը հրատարակութիվրեն Հայա-ստան նոր թագաւորութիւնն մը՝ հա-ւասար բիւ զանդականին, կ'ըսէ հմուտն Տիւլըրիէ, և քրիստոնեաներուն խնա-մակարութիւնն անոր կը յանձնուի: Ա-մեն կողմանէ կ'ընթանան եւրոպացիք Հայոց պյտ նորակառուց արքունեաց ծա-ռայութեանը մէջ մտնելու: Իմաստուն թագաւորս մեր բոլոր արկմտեայց պուետներով կիմաստուն արամիք, զորս առանց խսրութեան ազզի և կոնից հրաւիրած էր, կը ջանայ զթագաւորու-թիւնն Հայոց պայծ տուացնել: Այս ժամանակի հակառակութիւն կ'ըսէ կիրա-մանակիս կը հիւրընկալէ Փոքրն Հայա-ստան այնապի եկաւորաց հստ նաե ըզ-նիգարտոս Ա, թագաւոր Անդիոյ: Եւ ստուգիւ կը համանի նա իւր նպատա-կին: Վասն զի ըստ գաղղիացի մասե-նազրին, այս միջոցիս, այսինքն է առ կենդանութեամբ Լեռնի Բ, Ռուբր-

նեանց թագաւորութիւնն էր զօրաւոր և բարգաւած քան զամենայն: Անոր սահմանն յարեւելց էր Եփրատ գետը և գետակին Յուլիան-Սու, և կեզր-Սու, որնց ափանցը վրայ կը դտնուէին իւում գալէ, Այնթափ և Ազաղ քաղաքներն հիւսիսէն էին Զամանդիք և Ագ-կեսօլ գետերն յարեւմից կալիխագնու զե-տոյ հովիտն, ՚ի հարաւոյ Միջերկրա-կան, որ ըսուցեցաւ « Ծով Հայաստա-նի » անշուշտ Հայոց հզօր ազգեցու-թեան պատճառաւ:

Սակայն մենք Մ. Խորենաց պիտի ար-շակայ մասին զուրցած կրնանք կրկնել, թէ Լեռնի պէս քաղաքագէտ և քաջ թագաւորին և քաջացն Հայոց թագաւ. արութեան սուհմանն անոնց սուրերն և արի նահատակութիւնն պիտի ըլ-լային, որնցով յաղթական հանդի-սացան պիտուհետեւ իւոնիոյ Հալէպի: Անտիոքի և այլց իշխանոց վրայ, զրու մանրամասն կը գրեն արեմտեան և ա-րեկելուն պատմագիրք խաչակրաց: Հայոք կիպրոսի թագաւորութեանն ևս կը տիրէին քաղաքականապէս և իրօք, որուն վրայ տիրած էին արդէն բարոյա-կան ազգեցութեամբ, եթէ տարածամ մահուամբ իրենց անգին գլուխը չի կոր-ուցունէին: Անշուշտ Մեծն Լեռն իւր շրջահեաց քաղաքատեսութեամբն՝ զայս ՚ի նկատի ուներով ամսանացաւ կիպրոսի թագաւորին Ամաւրեայ:

Նորս այս վաղարշակ, արբայկան իշխանութեան լուսիթիւնն ընդունելէն յետոյ, Արշակունեացն պէս ձեռք կը զարնէ Հայոց թագաւորութեան յօրի-նուածութեանը, որուն նպաստամ-տոյց կ'ըլլային նաև հանգամանք քա-զաքային և զինուորական կազմակեր-պութեան խաչակրաց: Հայ ազգն՝ որ զիսցած է գարուն և ժամանակին պա-հանչմանցն և յառաջաղիմութեան հա-մաձայն զուգընթանալ, հիմն կը ձգէ արատական ըսուած սահմանադրու-

1 Պէտա-իտուին. Թարգմանութիւն Շուլտէ-նի. Էջ 120, 122:

2 Պատմ. ընդհանրական:

3 Հանհազար, պատմ. Հայոց համառօս, Էջ 67:

4 Ա Անտիոքի իշխանութիւնը յամին 1203 դրա-ւելով Մեծն Լեռն, իւր թուան հօրեղօր Խո-րէնի յանձնեց:

բեան։ Տիւլորիէ և Լանկուա¹ թէպէտ
և բռն հեղինակ Հայոց բարեկարդ սահ-
մանադրութեան և արժանի ամենայն
դրուտեաց զլիթծն Լեռն կը ճանչնան,
սակայն կը յաւելուն թէ նախագաղա-
փար այնր յօրինուածութեան և սահ-
մանադրութեան եղան Լատինք։ Իսկ
մենք նմանապէս չենք տարակուսիր ը-
սել, թէ Լատինք կամ Եւրոպացիք պատ-
ճառ տուած են իրօք անոր։ Բայց այս
քաղաքագէտ թագաւորն Որեւմտեաց
սահմանադրութեն նմանած ժամանակն,
իւր տեսութեան առջեն ունէր զկրկին
նախատիպ թագաւորս ազգին իւրոյ,
կ'ուզեմ ըսել զկրամ և զլաղաշակ,
և զո՞յ յօրինուածութեան նոցա։ Թերես
աւելի ճիշտ է ըսել, թէ ասոնց նախ-
նական յատակագծին վրայ, բայց Ա-
րեւմտեաց և միջնագարեան ճարտա-
րապետութեամբ, կը կազմէ նա ասպե-
տական զինուորութիւն մը, կը բարե-
կարգէ իւր արքունեաց հետ՝ նոյնպէս
զամենայն ատենական և խնամնակալա-
կան գործս և պաշտամունս տերութեան
Հայոց, և գաղղիական օրինաց մատե-
նով (Assises) կը վարուի։

Այս նորակազմ՝ յօրինուածութեան
մէջն եղող պարոն, մարգէզ, կուսն,
լիձ, բրինձ, առոր, և այլն, վերագիր
անուանքն որչափ որ տարբեր հնչմանց
հետ՝ նոյնպէս տարբերութիւն իշխա-
նութեանց կարծուին կը նշանակել, քան
ինչ որ կը նշանակէին Հայկազունեաց
շրջանին յօրինուածութեան մէջ նսին-
պետ, տէր, տակուտէր և իշխան։ Կ
Արշակունեաց ժամանակ, արքայ կամ
բազարոր, նախարար, աշագ տակու-
տէրը, ապատք, սեպուհի, ոստանիկը
և կրտսերագոյնք, սակայն իրօք զոգ-
ցես թէ նոյն են։ Որինակ իմն ինքնա-
կալ վերադիրն, զոր կուտայ Լամբրոնա-
ցին լւսնի, առ ոյն գրած նամակին մէջ,
կը զործածուէր փոխանակ արքայի
կամ բազարարաց բազարորի, զոր կու-
տան տոհմային և արտաքին մատենա-
գիրք Արշակունի իշխանաց։ Զայս 'ի

¹ Recueil des hist. des Crois. Documents
armen. Introduction, էլ LV.

նկատի ունելով, այնչափ ճիշդ չերկեր
մեղի գաղղիացի մատենադրին այս կար-
ծիքն, իբր թէ կիլիկիոյ Հայերն կամ ֆո-
քուն Հայոստանի ինքնավարութիւնն
Արևմտեաց սահմանադրութեանը նը-
մանելով, բոլորովին փոխեց իւր հին
սահմանադրութեանն և թագաւորա-
կան յօրինուածութեան եղանակը։ Ո-
րովհետեւ վերոյիշեալ հեղինակին՝ հին
նախարարութիւնն ըսածն, որ այս ժա-
մանակիս պարունութեանը կը համա-
պատասխանէ, բայտ մեր կարծեաց, նը-
կատելով իրքն երկիր կամ վիճակի բոլո-
րովին անկախ էր 'ի յարքայէն, և նու-
խարարը՝ իրքն պաշտօնական անձինք
միայն անորի կախումն ունէին։

Իսկ ընդհակառակն՝ թի գարու Պա-
րսէք՝ եղան ստոյգ և վիճակական
տեարք բոլորովին անկախ յինքնակա-
շէն։ Կամ այն է թէ գաղղիացի հե-
ղինակին քննադատութիւնն այնչափ
որոշ բացատրուած չէ և մենք անոր խո-
րը չենք կրնար թափանցել, և կամ ուղ-
ղակի Հայկազունեաց շրջանի նախա-
պետութեանն և կամ բազրատունեաց
ժամանակին նախարարութեանը վրայ
հաստատուած է, որոնք աւելի առան-
ձին թագաւորութիւնք կրնան ըստուիլ.
և իրօք եղան ամենահին ժամանակաց
մէջ, և Քրիստոսի թուականին թ և Ժ-
գարուց մէջ, նախանձնդդէմք մի-
մեանց քան թէ հպատակ նախարա-
րութիւնք մէկ թագաւորական յօրի-
նուածութեան մը։ Ազա թէ ոչ Արշա-
կունեաց շրջանին մէջ բոլորովին ընդ-
հակառակն կը տեսնուին, այսինքն թէ՝
նախարարը ոչ միայն 'ի պաշտամանէ
այլ և վիճակաց հանդերձ՝ թագաւո-
րութեան մասն կը կազմէին։ արքայէն
սերտիւ կախումն ունէին։ և հպատակը
օրինաց և սահմանադրութեան նորա-
իրաւցնէ, ինչ կը նշանակէ Ա. Վա-
զարշակաց և անոր յաջորդ թագաւորաց
ստէպ ստէպ այց ելլելն նախարարաց և
վիճակաց նոցա, զոր կ'աւանդէ մեղի
Մ. Խորենացի² և այլք այլուր. Բ. բու-

² Գիրք Բ. 4L. 2:

ըր նախարարութիւնք ստիպեալ էին ըստ պահանջման հարկին և արքայի՝ զարգ զրկել անդանդաղ և հարկ հանել ամ ըստ ամէ իրենց կալուածներէն, զրկել ՚ի գանձն տէրութեան և արքայի ՚ի. ոչ միայն խորենացիէն¹ այլ և ուրիշ ազբիւրներէ յայտնապէս կը տեսնուի թէ ոչ միայն նախարարք, այլ և ամենայն հպատակք նախարարաց² թագաւորաց թագաւորին օրինօքն և սահմանադրութեամբը կը վարուէին, և ոչ թէ առանձին օրինօք և սահմանադրութեամբ: Այսպէս կը տեսնենք նաև թուրքինեանց կամ փորուն չայոց թագաւորական յօրինուածութեանը մէջ: Լեռն Մեծն, յամին 1204 ձենովացւոց չնորհած առանձնաշնորհութեան մէջ, և յամին 1215 Տաճարականաց և Ընտիռքայ իշխանին հետ ունեցած քանագնացութեանցը մէջ, կըսէ, «Մեր Պարոնաց ամենն երկիրներուն մէջ»: «Մեր մարդկանց, և այն»: Ուրեմն Մեր վերադիրն ամենայն Պարոնաց և անոնց կալուածոց կամ վիճակաց կախումն ունենալը կը ցուցընէ ՚ի թագաւորին կամ ինքնակացէն: Ուրեմն եզրակացութիւնն յայտնի է, թէ Հայք Փռանկաց սահմանադրութեամբն և օրինօքը վարուած ժամանակ, իրենց նախնեաց սահմանադրութիւնքն ևս հաստատուն կը պահէին, գէթ ըստ հիման: Որովհետեւ ըստ օրինաց մատենին Գաղղիացւոց և Արևմտեայց, որ ՚ի միջին դարս, առանձին դքսութիւնք ոչ միայն իրարմէ անկախ էին, այլ նաև թագաւորէն: Մանաւանդ Դուքսք՝ էին անկախ և փոքրիկ թագաւորներ, եթէ յարեմուտու և եթէ արեւելեան վիճակաց մէջ, յորոց ծագեցան ապա բռնաւորք: Բաց ՚ի այս մեծ տարբերութենէն, Հայոց թագաւորութիւնն կամ Ռուրինեանց հարստութեան պայազատութիւնն ժառանգական էր և ոչ թէ բիւզանդականին կամ երուսաղեմայ և Անտիոքայ թագաւորութեանց պէս ընտրական:

Թերեւս չդիտելով մեր հայ հարրատութեան այսպիսի փառաւորութիւնն,

1 Գիրք Բ. գլ. Ը. էջ 174:

և ուղիղ քննադատութենէ աւելի՝ պարզապէս յազդասիրական խանդից կամ յայլ ինչ մոլենախանձ տեսութեանց թելագրուած, մեղազրեն ոմանք զլիեծն Լեռն և անոր նախորդքն, իրը թէ ազգականութեան սերտ յարաբերութեամբ զուգախառնեալ ընդ Եւրոպացւոց՝ ածին զկրոծանումն թագաւորութեան թուրքինեանց և անհետանալը ապկիս: Բայց այսպիսի ենթադրութիւն մը չի կրնար ստոյդ հիման վրայ հաստատուած ըլլալ. որովհետեւ ոչ միայն Լեռնի հոգւոյն և մտաց՝ այլ նոյն իսկ պատմութեան գէմ կը մաքառի: Յիրաւի բաւական է առ այս ընթեռնուլ զմուղթն Մեծին Լեռնի առ ծայրագոյն Քահանայապետն եկեղեցւոյ, և զգիրս կիրակոսի, Վահրամայ, և Վիլլեբրանդ գերմանացւոյ, զորս գեղեցիկ կերպով հաւաքած է Հ. Մ. Զամենան ։ ակն յայտնի կը տեսնուի Հայոց թագաւորին ծածկագէտ քաղաքատեսութեան հետ՝ նաև անոր վրէժիրնդիր ոգին, և ազգային իրաւունքներն և անոր ամբողջութիւնը պահելու մեծագոյն ջանքն՝ ընդդէմ Լատինաց:

Ինչ զարմանալու բան է գարձեալ, կամ մեղազրութեան արժանի կէտ Լեռնի ամուսնանալն ընդ Լատին և օտարազգի տիկնոջ հետ, մինչեռ ամենահին ժամանակաց ՚ի վեր մինչեւ ցայսօր ամեն ազգաց իշխանազունք և թագաւորք կ'առնուն անխսիր:

Ասկէ ալ գեղեցիկ և նուրբ քաղաքատեսութիւնն չէր կրնար ցուցընել իւր բնիկ խանձարուբրէն տարադիր եղած ժամանակ՝ Հայ ազգն, մանաւանդ ՚ի փոքրն Հայաստան, և ոչ թէ յիւրոպա գտնուած ժամանակ, ուր ունէր գեռ իւր ազգային ինքնավարութիւնն, բայց Բազրատունեաց հարստութեան աղետալի կործանմամբն արդէն իսկ կորմնցուցած էր գրեթէ բոլոր իւր պանձակի և հինաւուրց նախարարաց զարմն և սերունդը. եթէ ոչ երթալ և շփուիլ աղամանդեայ՝ բայց գեռ անձեւ զանգուածի մը պէմ Եւրոպական աղդաց

2 Պատմ. Հայոց հա. Գ. գլ. իւ:

այլաստարր բայց ամենապատուական և
մեծառուհմ զանգուածոց հետ, որոնց
հետ գեռ բոլորովին միախորհ և միա-
կրօն էր, և փայքեցնէր անոնցմով Ռու-
բինեանց կամ ֆորուն Հայոց թագա-
ւորութեան թագին վրայ բազմաթիւ
Պարոնայց, Մարդէղներու, ասպետաց
և գեռ ուրիշ ազնուականաց դաստիար-
գութիւններ . և այնու յաւերժացընել
իւր անունն և արարուածքն՝ 'ի մէջ այ-
լոցթագաւորութեանց և պատմութեան
ժամանակին . ինչպէս ըրաւ իւր նախ-
նական շրջաններուն մէջ, այսինքն է
Հայկալունեաց և Արշակունի հարստու-
թեանց ժամանակն՝ Ասորեստաննեայց և
Պարսից հետ խնամենալով: Արդ ինչ-
պէս որ այն ազգաց մէջ կրցաւ անկո-
րուստ պահել իւր ազգին ամբողջու-
թիւնն՝ հանդերձ շահմէք ազնուակա-
նութեն, այսպէս ևս կարող էր առնել
այս շրջանիս կամ Լատին տարերաց մէջ:

Սակայն Հայ ազգը գեռ աստ ևս չը-
տեսած իւր դառն աղետից և հարստա-
հարութեան օրեղը, վաճառականական
և ուրիշ մեծամեծ օգուստներ ևս պիտի
մատուցանէր արևմտեան ազգաց, և ի-
րօք մատոյց, կ'ըսէ պատմութիւնն:

Արդի պատմազիրներէն շատերն, ո-
րոնք խաչակրաց և միջին քարու պատ-
մութեան վրայ Երկասիրեցին, կը հաս-
տատեն թէ խաչակրաց առթիւ Եւրոպա
բազմապիսի օգուստներ քաղեց յԱրևե-
լից: Մէնք այն օգուստներէն երկու-
քը միայն մէջ բերենք, յորս Հայ ազգն
ևս նախնաբար և մեծամեծ դեր խա-
ղաց . այս ինքն են սկզբնաւորութիւն և
զարգացումն վաձառականութեան և
ձարտար արուեստից :

Բոլոր Եւրոպից մէջ՝ իտալիա յար-
մար կ'երեւէր ՚ի սկզբանէ կապելու զի-
րեմուտս ընդ Արևելից ՚ի վաճառաշա-
հութիւն, իւր աշխարհագրական դրից
և բազմաթիւ և գեղեցիկ նաւահան-
գըստաց պատճառաւ: Հինգերորդ դա-

րու բարբարոսաց արշաւանքներն աս-
տի՞ և անտի ներքին յեղափոխութիւնք
իրեր անմիջական հետևանք այն արշա-
ւանաց, արդէն իսկ տկարացուցեր և
անհետ ըրեր էին զվաճառականութիւն
և զնաւարկութիւնս արկմտեայց, կ'ըսէ
հմտութիւննագատակ մին ։ վենետիկ,
և միայն վենետիկի կը յիշուի բոլոր ի-
տալիոյ և Եւրոպից վաճառաշահ քա-
ղաքաց մէջ, որ զառաջինն պահեց և
բարգաւաճեց զվաճառականութիւն և
զարուեստս ՚ի բոլովնդակ ընթաց միջին
դարուց և յետ այնորիկ, հաղորդելով
արեւելեան շահաստաններուն: Ե՛րբ ար-
դեզ սկսաւ արևմտեայց վաճառակա-
նութիւնը վենետիկեցւոց ձեռքով ընդ
արեւելից: — Ե՞նչ ուղղութեամբ, և նախ
քան զամենայն, ո՞ր ազգի և աշխարհի
հետ: Ասոնք չէ մարթ գեռ ևս պատմա-
կան հաւասարեօք ստուգել բոլորովին:
Մարին⁹, որ եկաց ՚ի վերջ կոյս ժամարու,
կ'ըսէ, թէ վենետիկեցւոց վաճառակա-
նական վերաբերութիւնն սկսան յա-
ռաջ քան զամն 99 ի բիւզանդական տէ-
րութեան կամ կ. Փօլսոյ հետ . թէպէտ
և այն վաճառականական յարաբերու-
թեանց վերաբերեալ հնագոյն յիշա-
տակարանքն անհետացած են ՚ի միջոց,
բայց նա կը համարի թէ իտալիոյ Մարզ-
պանութեան (exarchat) ժամանակին¹⁰ ՚ի
վեր եղած ըլլային: Կասիոդորո¹¹ մա-
սենագիր Զ գարու, երկայն երթևե-
կութիւններ կը յիշէ վենետիկեցւոց նա-
ւերուն: իսկ սկիէ աւելի եղրակացու-
ցիչ է տարեգրի մը վկայութիւնն, որ
կարողու Մեծի ժամանակակից էր. կ'ը-
սէ նա¹², թէ երբ կայսրն ՚ի Ֆիլիպու կը
գտնուէր՝ բաւիայէն հասան անոր պա-
տմականքն, ուր վենետիկեցիք նոր բե-
րած էին զվաճառս և զգանձս արևե-
լից, և զարդարուած արեւելեան թան-
կադին կերպասուք և մուշտակներով
ներկայացան ժագաւորին:

Ուրեմն այս և գեռ ուրիշ վկայու-

1 Հէրէն. Ճառ ՚ի վերայ ազգ. Խաչակրաց.

էլ 309:

2 Պատմ. վենետիկոյ. էլ 121:

3 Հա. Բ. էլ 82:

4 Յաղագս գործ. Կարոլոսի Մէծի, Բ. 27

առ. Պուեէի հա. Ե. էլ 152 և առ. Պէքմաննի

հա. Ե. 56:

թիւններն յարգելով՝ կ'ըսե՞նք, թէպէտ
և իրօք վենետիկեցոց վաճառականա-
կան վերաբերութիւնն նախնարար թիւ-
զանդացոց պետութեան՝ քան փոքուն
Հայոց հետ եղած ըլլայ, բայց չե՞նք տառ-
րակումիր ըսել ընդ Հէրէնի թէ այն

վաճառականութիւնները ալսկսած ըլլար,
սակայն այս յայտնի է թէ խաշակրաց
ժամանակ եղաւ յորդահոսան գետ, և
յետ այնորիկ ծաւալեց իւր արգասա-
ւորութիւնն յիսիւ և յիւրովէ առհա-
սարակ: իսկ թէ ինչպէս, տեսնենք:

Աղ շարունակուի

Հ. Բ. Սարգսոս

Վ. Ա. Ս Ն Վ. Ա. Ն Ո Ր Է Ի Ց

Ո Ր Ի Ս Ո Ւ Ի Ր Բ Ք Ա Ղ Ա Ք Յ Յ Ե Խ Ե Ր Ո Ւ Խ Ս Ա Ղ Ե Մ

ՅԱԳԱԹԱՆԳԻՂԵԱՅ պատմութենէն որ Եր դպրապետ սուրբ Լուսաւորչին Գրիգորի¹:

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ժամանակիս գիտնական միանգամայն և կրօնախառն հետազոտութեանց՝ մէկ զիխաւորն ալ է Սուրբ տեղեաց այխարհագրական ժանոնթութիւնն, և խաչակրաց որ և է յիշաստակարանաց յա-
րւելու, սար համար, զատ յայցոց, 'ի Գաղղիա կազմուեցաւ Ընկերութիւնն Լատին արևելից, Տո-
ւուէ ծ ՕՌիեն լան, որոց վրայք արդէն նորիք ազգային լրագիրը ալ շափառը տեղեկութիւն
տուին: Նոյն նորիք ազգային լրագիրը անձինք նարդար զրկած ենք իրեն փան-
կերէն թարգմանութիւնն հետևեալ կարւոր գրուածնն, որ է դարու վերջերը կամ Ըն սկզբոր շա-
րագրուած է անշուշտ յԱնաստառ Վարդապետտէ Հայոց, որոց վրայ որիշ մ'ալ աւելցուցեր կամ
ընդարձակեր է տեղեկութիւն. երրորդ մ'ալ զանելով զնոյնս՝ ի յիշեալ ձեռագրի Անկիւրիոյ վանաց՝
զարգափարեր է Մեր օրինակն անկէ է. որիշ օրինակ մ'ալ ունիմէ 1624ին գրած, յորում այդ
յետին հաստատն չկայ: Փափակութեք որ լաւագոյն օրինակը կամ սար նման գրուածք Երևանուղէմի
տեղեաց վրայօք՝ հրատարակուէին, որպիսիք աւելի յաւալի են գտուիլ ՚ի մասեալ Վանդրայս
Հայոց Սուրբ Երկին:

Ի ժամանակս թագաւորութեան Տըր-
դատայ և 'ի հայրապետութեան սրբյն
Գրիգորի Լուսաւորչին, մեծամեծ իշ-
խանքն Հայոց, շիննեցին վանորայք 'ի
սուրբ քաղաքն Երուսաղէմ: որոց ա-
նուանիք վանորէիցն են այսորիկ.

Պետրոսի վանքն, որ արտաքոյ քաղա-
քին է, 'ի կողմանէ Սելլվամայ որ կոչի
Հառաջումն Պետրոսի: Ծննիւք և ծա-
խիւք արքունի շիննեալ եղն:

Պանդայ վանքն որ սուրբ կարապե-
տին է, որ յարենից կողմանէ 'ի Զի-
թենեաց լերինն կայ, նոյնպէս արքունի
ծախիւք շիննեալ յանուն սուրբ կաթու-
զիկէին որ 'ի Վաղարշապատ քաղաքի,
զոր Աղուանք ունին մինչև ցայժմ:

Մըժայ վանքն, որ յանուն Սուրբ Քա-
ռասնիցն, զոր այժմ Տաճիկը ունին:

Մերձ 'ի նա բատին վանքն Ենիրա-
կացւոց, զոր կնկղաւորաց վանք յետոյ
անուանեցաւ:

Սուրբ Գէորգայ վանքն, 'ի նոյն կողմն
է, զոր այժմ աւեր է:

Նորավանք, մերձ 'ի գերեզմանն իսա-
յեայ մարգարէին, 'ի նոյն կողմն Զիթե-
նեաց լերինն, զոր այժմ քակեալ են
Տաճիկք:

Խագայ երանելւոյ վանքն, որ է 'ի
ձորն Յովսափատու մերձ 'ի Գեթսե-
մանի:

Սուրբ Պողոսքոսի վանքն, շիննեալ²
Չորրորդապետն Հայոց 'ի հիւսիսոյ կողմն:

Հետզի անծանօթ է այսպիսի իշխանութիւն մի
'ի Հայոց:

1 Մէջի ծանօթ Աղաթանգելեայ պատմու-
թեան մէջ այսպիսի յիշտառակ չկայ:
2 Եթէ Չորրորդ Հայոց (Պողոս) նախարարն